

ԱՄ ՓԱՐԹՆԵՐԴ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ ՔԱՍՓԻՒ
2011, մայիս

Նախատեսվող “Խուստուի” եւ գործող “Զանգեզուր” արգելավայրերի շահառուների վերլուծություն



Բնության համաշխարհային
հիմնադրամի հայաստանյան
մասնաճյուղ



ԱՄ ՓԱՐԹՆԵՐԴ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ ՔԱՍՓԻՒ

Բովանդակություն

1 ՆԱԽԱԲԱՆ	5
1.1 ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ԾՐՁԱՆԱԿՆԵՐԸ	5
1.1.1 Տեղեկություններ ծրագրի մասին	5
1.1.2 Տեխնիկական առաջադրանք	6
1.2 ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ	7
1.2.1 Շահառուների բացահայտում եւ նրանց կարիքների սահմանում	7
1.2.1.1 Շահառուների նկարագիրը	7
1.2.1.2 Ծրագրում ներգրավելու հիմքերը	8
1.2.2 Տեղեկատվության հավաքագրում եւ գրառում	8
2 ԾԱՀԱՈՈՒՆԵՐԻ ԻՐԱԶԵԿՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ	9
2.1 ԱՐԳԵԼԱՎԱՅՐԵՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ ԵՒ ԸՆԴԱՅՆՄԱՆ ՄԱՍԻՆ ԾԱՀԱՈՈՒՆԵՐԻ ԻՐԱԶԵԿՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ	9
2.2 ԱՐԳԵԼԱՎԱՅՐԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱՆՑՐԱԺԵՏԾՈՒԹՅՈՒՆԸ	10
2.3 ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՅՈՐԴԱԿՑՄԱՆ ԼԱԽԵՆՏՐԵԼԻ ՁԵՎԵՐԸ	11
3 ԾԱՀԱՈՈՒՆԵՐԻ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ	13
3.1 ԾԱՀԱՈՈՒՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՄԸ ԱՐԳԵԼԱՎԱՅՐԵՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՈՒ ԸՆԴԱՅՆՄԱՆԸ	13
3.2 ԾԱՀԱՈՈՒՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՄԸ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ ԱՐԳԵԼԱՎԱՅՐ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ	13
3.3 ԱՐԳԵԼԱՎԱՅՐԵՐԻ ՆՃԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ	15
3.4 ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ԻՐԱԶԵԿՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ	15
3.5 ԾԱՀԱՈՈՒՆԵՐԻ ՄՈՏԻՎԱՑԻԱՆ	15
3.6 ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԾԱՅԵՐԻ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ ՀՆԱՐԱԿՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԸ	17
3.7 ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԿԱՐՈՒՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	17
3.7.1 Տեղական եւ մարզային իշխանություններ	17
3.7.2 Պետական կառույցներ	17
3.7.3 Հասարակական կազմակերպություններ	18
3.7.4 Մասնավոր հատված	18
3.8 ԾԱՀԱՈՈՒՆԵՐԻ՝ ԱՐԳԵԼԱՎԱՅՐԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՆԵՐԳՐԱՎԿԵԼՈՒ ԿԱՐԻՔՆԵՐԸ	18
3.9 ԱՐԳԵԼԱՎԱՅՐԵՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀՆԱՐԱԿՈՐ ԽՈԶԸՆԴՈՒՆԵՐԸ	19
4 ԾԱՀԱՈՈՒՆԵՐԻ ՍՊԱՍԵԼԻՔՆԵՐԸ	21
4.1 ԾԱՀԱՈՈՒՆԵՐԻ ԱԿՆԿԱԼԻՔՆԵՐԻ ԲԱՑԱՐԱՅՏՈՒՄ	21
4.1.1 Տեղական եւ մարզային իշխանություններ	21
4.1.2 Պետական կառույցներ	22
4.1.3 Հասարակական կազմակերպություններ	22
4.1.4 Մասնավոր հատված	23
4.2 Ո՞Վ ՊԵՏք Է ԻՐԱԿԱՆԱՑՆԻ ՎԵՐԱՐԱԿՈՂՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ	23

4.3 ԲՅՊՏ-ի ԱՇԽԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԾԱՐԱՈՈՒՆԵՐԻՑ ՅՈՒՐԱԶԱՆՉՅՈՒՐԻ ԳՈՐԾՈՒԵՈՒԹՅԱՆ ՎՐԱ	24
4.3.1 Դրական ազդեցություն.....	24
4.3.2 Բացասական ազդեցություն	26
4.4 ԾԱՐԱՈՈՒՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԿԱՐԻՁՆԵՐԸ	27
5 ԱՄՓՈՓՈՒՄ ԵՎ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ	29
5.1 ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ	29
5.2 ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	31
6 ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ	33
6.1 ՀԱՎԵԼՎԱԾ 1. Հարցման մասնակից շահառուների ցանկ	33
6.2 ՀԱՎԵԼՎԱԾ 2. Շահառուների վերլուծության աղյուսակ.....	36
6.3 ՀԱՎԵԼՎԱԾ 3. Շահառուների կարիքների գնահատման հարցաթերթ	39
6.4 ՀԱՎԵԼՎԱԾ 4. Նախատեսվող «Խուստուի» արգելավայր.....	48
6.5 ՀԱՎԵԼՎԱԾ 5. «Զանգեզուր» արգելավայր.....	49
6.6 ՀԱՎԵԼՎԱԾ 6. Նորումներ	49

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ԳՆ	Գյուղատնտեսության նախարարություն
ԲՆ	Բնապահպանության նախարարություն
ՄՆ	Մշակույթի նախարարություն
ԲՀՀ	Բնության համաշխարհային հիմնադրամ
ՀԲ	Համաշխարհային բանկ
GTZ / ԶԻ-ԹԻ-ՇԵՔ	Գերմանական տեխնիկական համագործակցություն
KfW	Գերմանիայի Դաշնային Հանրապետության վերակառուցման եւ զարգացման բանկ (Kreditanstalt für Wiederaufbau)
ԵԱՀԿ	Եվրոպայի անվտանգության եւ համագործակցության կազմակերպություն
ԲՊՏ	Բնապահպանական պետական տեսչություն
ՄԱՉԾ	Միացյալ ազգերի զարգացման ծրագիր
ԳԵՅ	Գլոբալ էկոլոգիական հիմնադրամ
ՏՀԾ	Տարածքային զարգացման ծրագիր
ՊՈԱԿ	Պետական ոչ առեւտրային կազմակերպություն
ՀԵԿ	Հիդրոէլեկտրոկայան
ԻԱՄ	Իրավաբանական անձանց միություն
ՀԿ	Հասարակական կազմակերպություն
ԲՀԿ	Բարեգործական հասարակական կազմակերպություն
ԶՀԻ	Զարգացման հասարակության ինստիտուտ
ՈՒՎԿ	Ուսիվերսալ վարկային կազմակերպություն
ՓՄՁ	Փոքր ու միջին ձեռնարկություն

1 ՆԱԽԱԲԱՆ

1.1 ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ

Շահառուների վերլուծությունը ապահովում է արգելավայրերի ստեղծման եւ ընդլայնման, ինչպես նաև քնական ռեսուրսների կառավարման գործիքների զարգացման տեղեկատվական հիմքերը։ Սույն հետազոտության նպատակն է օժանդակել արգելավայրի կառավարման մորելի ստեղծման գործընթացներին՝ առավելագույն արդյունավետություն ապահովելով ինչպես քնապահպանության, այնպես նաև՝ համայնքային ներգրավվածության առումներով։

Շահառուների մասով վերլուծությունը կազմում է ընդհանուր հետազոտական աշխատանքի մի մասը, որն ունի եւս երկու բաղադրիչ։

- համայնքների հիմնարար սոցիալ-տնտեսական հետազոտություն,
- տուրիզմի զարգացման հնարավորությունների ուսումնասիրություն։

1.1.1 Տեղեկություններ ծրագրի մասին

Հայաստանի արդյունաբերության եւ գյուղատնտեսության զարգացումը, քնական տարածքների մեծամասշտաբ յուրացումը, ինչպես նաև կլիմայի փոփոխությունը բերել են էկոհամակարգերի ամբողջականության եւ հավասարակշռության խախտման։ Պատճառահետեւանքային ազդեցությունները ընդհանուր առմամբ ներառում են՝ խոցելի քնակամիջավայրերի դեգրադացումը, բուսական եւ կենդանական աշխարհի տեսակային կազմի նվազեցումը եւ էկոհամակարգային համալիր մոտեցումների թերի կիրառումը։ Այսպիսով, նվազում են համայնքների սոցիալ-տնտեսական բարեկեցությունն ապահովող հիմնական աղբյուրներից (քնական պաշարներից) օգտվելու հնարավորությունները։

«Հայաստանի պահպանվող տարածքների համակարգի զարգացում» ծրագրի նպատակը Հայաստանի գլոբալ քնապահպանական նշանակության կենսաբազմազանության է պահպանությունն է։ Ծրագրի խնդիրն է նպաստել արգելավայրերի ընդլայնմանը՝ ներկայիս ԲՀՊՏ-ների համակարգում էկոհամակարգերի առավել ընդգրկուն ներկայացվածությունն ապահովելու եւ կենսաբազմազանության պահպանության գործում շահառուների ակտիվ մասնակցությունը առավել խթանելու նպատակով։

Երկու հիմնական շեշտադրումներն են քնության հատուկ պահպանվող տարածքների (ԲՀՊՏ) համակարգի ռացիոնալացումը եւ ինստիտուցիոնալ կարողությունների զարգացումը։ Ծրագրի իրականացման արդյունքում երկրի ԲՀՊՏ համակարգն առավել լիարժեք կերպով կընդգրկի ներկայումս թույլ ներկայացված էկոհամակարգերը եւ կենսաբազմազանությունը։ Ներդրումները կուղղվեն համայնքներ՝ ստեղծելով բարենպաստ պայմաններներնական պաշարների ռացիոնալ օգտագործման համար, ինչպես նաև բարելավելով գյուղական ենթակառուցվածքները եւ միեւնույն ժամանակ նպաստելով աղքատության ծավալների կրճատմանը։ Հայաստանի ԲՀՊՏ համակարգում ընդգրկված որոշ էկոհամակարգերը խիստ կարեւոր են միջազգային նշանակության մի շարք տեսակների, այդ թվում ենդեմ ագրոկենսաբազմազանության պահպանության համար։

Ծրագիրը կազմում է ՄԱՀԾ/ԳԵՅ «Հայաստանի պահպանվող տարածքների զարգացում» միջին ծավալի ծրագրի բաղկացուցիչ մասը։

1.1.2 Տեխնիկական առաջադրանք

Առաջադրանքը ներառել է հետեւյալ հիմնական խնդիրները.

- Ներկայացնել շահագրգիռ կողմերի շահերը եւ հետեւողական լինել, որ համայնքների ներգրավվածությունը ծրագրում լինի մասնակցային,
- Ծրագրով նախանշված խնդիրների համատեքստում ուսումնասիրել եւ գնահատել շահագրգիռ անհատների, խմբերի եւ կառույցների կարիքները եւ ակնկալիքները,
- Որոշել տարբեր շահառուների մասնակցության ձեւերը ծրագրի իրականացման տարբեր փուլերում,
- Մշակել առաջարկություններ հնարավոր համագործակցության ուղղությամբ:

Շահագրգիռ կողմերի մասով վերլուծությունը¹ ներառում է հետեւյալ հանձնարարականները.

- **3.1:** Ուսումնասիրել օժանդակ/երկրորդական փաստաթղթերը, ներառյալ՝ ընթացիկ կամ նախատեսվող տարածաշրջանային կամ տեղական զարգացման ծրագրերը,
- **3.2:** Նախագծել շահագրգիռ կողմերի վերլուծության մեթոդոգիփա եւ հարցաշարեր,
- **3.3:** Իրականացնել շահագրգիռ կողմերի վերլուծություն, որը՝
 - մասնակցային է եւ իրագործելի,
 - ներկայացնում է տարբեր շահագրգիռ կողմերի՝ դասակարգելով նրանց ըստ կարեւորության եւ ազդեցության աստիճանի,
 - ներկայացնում է շահագրգիռ կողմերի իրագեկվածությունը, դիրքորոշումն ու տեսակետները,
 - սահմանում է ծրագրի իրականացման հնարավոր խթաններն ու բացահայտում խչընդոտները,
 - վերլուծում է շահագրգիռ կողմերի հիմնական մտահոգությունները եւ ակնկալիքները:
- **3.4:** Վարել հարցագրույցներ պետական կառույցների, տեղական ինքնակառավարման մարմինների, համայնքների (Ճակատեն, Ծավ, Շիկահող, Լեռնաձոր, Վարդանիծոր, Գեղանուշ, Ներքին Յանդ, Սրաշեն (Սյունիք) եւ Ագարակածոր, Գևիշիկ, Խաչիկ եւ Վրեսի (Վայոց Ձոր), քաղաքացիական հասարակության ինստիտուտների² ներկայացուցիչների եւ համապատասխան այլ շահառուների հետ: Մասնավիրապես՝
 - Սյունիքի եւ Վայոց ձորի մարզպետարանների ներկայացուցիչների,
 - համայնքապետեր եւ թիրախային համայնքային խորհուրդների անդամների,
 - ՀՀ գյուղատնտեսության նախարարության (ԳՆ) «Հայանտառ» պետական ոչ առեւտրային կազմակերպության (ՊՈՂԿ) ներկայացուցիչների,
 - «Արփի» բնապատմական արգելոց
 - ՀՀ բնապահպանության նախարարության (ԲՆ) Բնապահպանական պետական տեսչության (ԲՊՏ) գրասենյակների,
 - ոլորտում շահագրգուված եւ ակտիվ ներգրավվածություն ունեցող հասարակական կազմակերպությունների (ՀԿ-ների),
 - բիզնեսի զարգացման աջակցության գործակալությունների,
 - միությունների, ասոցիացիաների եւ կոոպերատիվների,
 - մասնավոր ձեռնարկությունների՝ գինեգործության, լեռնահանքային արդյունաբերության, եներգիայի արտադրության, գյուղատնտեսության, եւ այլ ոլորտներում,
 - պոտենցիալ ներդրողների (Ազրոբիզնեսի եւ գյուղի զարգացման կենտրոն, Յայաստանի ազգային մրցունակության հիմնադրամ եւ այլն):

¹ Վերլուծության տվյալները կօգտագործվեն նախատեսվող «Գևիշիկ» եւ «Խորհրդական գործողություն» արգելավայրի կառավարման պլանը մշակելու եւ/կամ լրամշակելու նպատակով:

² Քաղաքացիական հասարակության ինստիտուտները գեկույցում պայմանականորեն կընդիանարացվեն որպես հասարակական կազմակերպություններ: Այս ոլորտի հաստատություններն են նաեւ ասոցիացիաները, միջազգային կառույցների տեղական ներկայացուցությունները, միությունները, կոոպերատիվները եւ այլն:

- **3.5:** ԲՅՅ հայաստանյան գրասենյակին տրամադրել հետեւյալ տեղեկատվությունը.
 - հիմնական շահագրգիռ կողմերը եւ նրանց ինտիրները / նպատակները,
 - կարեւոր ենթախմբերը եւ անհատները,
 - ծրագրին իրականացնող կառույցների եւ ՅՅ կառավարության հնարավոր ներգրավվածությունը շահագրգիռ կողմերի ինտիրներին ու նպատակներին արձագանքելու հարցում:

1.2 ՄԵԹՈԴԱԲԱՆԻԹՅՈՒՆ

1.2.1 Շահառուների բազահայտում եւ նրանց կարիքների սահմանում

1.2.1.1 Շահառուների նկարագիրը

Շահառուների վերլուծությունը հաշվի է առնում ծրագրի տարբեր շահագրգիռ կողմերի կարիքները: Այս հնարավորությունը է տալիս պատկերացնել օգուտների եւ վնասների հարաբերակցությունը, շահերի բախումները եւ մշակել այդ ինտիրների լուծման մեթոդները: Բնապահպանական ծրագրերի իրականացման համատեքստում հիմնական շահառուներ են հանդիսանում ԲՀՊՏ-ներին հարակից համայնքները:

«Գնիշիկ» եւ «Խուստուփ» արգելավայրերի ստեղծման եւ գործող «Զանգեզուր» արգելավայրի տարածքների ընդլայնման ծրագրի շրջանակներում հարցումներ են անցկացվել նախատեսվող եւ գործող արգելավայրերի տարածքների եւ դրանց սահմանների մասին տարբեր շահառուների կարծիքը պարզելու, ինչպես նաև արգելավայրի համայնքային կառավարման մոդելների եւ ընդհանուր առմամբ արգելավայրերի ստեղծման վերաբերյալ շահառուների մոտեցումները գևահատելու համար: Ուսումնասիրության շրջանակներում կազմակերպվել են հարցումներ Երեւանում, ինչպես նաև ՅՅ Երևու հարավային մարզերում՝ Վայոց Ձորում եւ Սյունիքում:

Շահառուների նախնական ցանկը կազմվել է տարբեր փաստաթղթերի³, ուղեցույցերի եւ համապատասխան վեր կայքերի դիտարկման եւ ընդհանուր իրազեկվածության արդյունքում: Շահառուների որոշման հարցում տեղեկատվական օժանդակություն են տրամադրել Ազրոբիզնեսի եւ գյուղի գարգացման կենտրոնը, ինչպես նաև Օրիուս կենտրոնը: Վերլուծության ընթացքում շահառուների ցանկը փոխվել է եւ համարվել՝ հիմնվելով նաև այն սկզբունքի վրա, թե ում են ցանկում ընդգրկված կազմակերպությունները տեսնում որպես ծրագրի շահառուներ:

Այսուհետեւ շահառուները դասվել են մի քանի խմբերի: Մարզերում խմբերն են՝ տեղական եւ մարզային իշխանությունները, պետական կառույցները, քաղաքացիական հասարակության ինստիտուտները (այլապես՝ ՀԿ-ները), մասնավոր հատվածը (լեռնահանքային ծեռնարկություններ, ֆերմերային տնտեսություններ, գինեգործներ, մեղվապահներ եւ այլն):

Երեւանում խմբերն են՝ պետական կառույցները, միջազգային կազմակերպությունները, քաղաքացիական հասարակության խմբերը կամ ՀԿ-ները, ծրագրերը (օրինակ՝ «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարում եւ մրցունակություն» ծրագիրը): Շահառուների նախնական ցանկը, ինչպես նաև հարցաշարերը հաստատվել են ԲՅՅ հայաստանյան մասնաճյուղի համապատասխան մասնագետների կողմից::

³ Նախատեսվող «Գնիշիկ» արգելավայրի կառավարման պլանի նախագիծ, «Շիկահող» պետարգելոցի կառավարման պլանի նախագիծ:

1.2.1.2 Ծրագրում ներգրավելու հիմքերը

Շահառուների ընտրությունը հիմնված է եղել համապատասխանության չափորոշիչների վրա: Մի կողմից, ընտրվել են կառույցներ կամ անհատներ, որոնց լիազորությունները, շահերը եւ/կամ միջոցները կարող են այս կամ այն կերպ ազդել ծրագրի ընթացքի վրա: Մյուս կողմից, հաշվի են առնվել այն խմբերը, ում գործունեության զարգացման վրա ծրագիրը կարող է զգալի դրական կամ բացասական ներգործություն ունենալ:

Ընդհանուր առմամբ, շահառուների նախնական ցանկում ներգրավվել են 80 հարցվողներ: Մշակվել է տվյալների բազա, որտեղ ներկայացվել են շահագրգիռ կառույցի ներկայացուցիչների տվյալները: Յարցվողների թիվը կազմել է 74, որից 25-ը՝ Վայոց Ձորում (տես Յավելված 1), 30-ը՝ Սյունիքում եւ 20-ը՝ Երեւանում: 9-ը հարցում իրականացվել է Ելեկտրոնային տարբերակով: Շահառուների սպասելիքները, կարիքները, ծրագրի նկատմամբ նրանց դիրքորոշումը ամփոփ ներկայացված են առանձին աղյուսակով (տես Յավելված 2):

1.2.2 Տեղեկատվության հավաքագրում եւ գործում

Առաջին հերթին ուսումնասիրվել են տարբեր նմանատիպ հետազոտություններ, աշխատանքային փաստաթղթեր եւ այլն: Երկրորդական փաստաթղթերի ուսումնասիրությունն արվել է թիրախային մարզերում ընթացիկ կամ նախատեսվող ծրագրերի նպատակներն ու արդյունքները պարզելու եւ համագործակցության հնարավոր ուղիներ փնտրելու համար:

Յարցաշարի (տես Յավելված 3) կազմման աշխատանքներին մասնակցել են ԲՀՊՏ եւ սոցիալ-տնտեսական հետազոտությունների ոլորտում փորձառություն ունեցող մասնագետներ: Յարցաշարում տեղ են գտել բաց եւ փակ հարցեր, որոնց պատասխանները ստացվել են շահառուների հետ հանդիպումների եւ հարցագրույցների, հեռախոսային հարցագրույցների կամ Ելեկտրոնային հարցումների ընթացքում:

Վայոց Ձորում հարցմանը մասնակցել են 4 համայնքներ, իսկ Սյունիքում՝ 10 (ներառյալ Կապան եւ Քաջարան քաղաքները): Յավաքագրված տեղեկատվությունը գրառվել է, թվայնացվել եւ համապատասխանաբար վերլուծվել:

2 ԾԱՐԱՌՈՒՄԵՐԻ ԻՐԱԶԵԿՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ

2.1 ԱՐԳԵԼԱՎԱՅՐԵՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ ԵՒ ԸՆԴՎԱՅՆՄԱՆ ՄԱՍԻՆ ԾԱՐԱՌՈՒՄԵՐԻ ԻՐԱԶԵԿՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ

Ինչպես Վայոց Ձորում, այնպես էլ Սյունիքում հարցվողները հստակ չեն պատկերացնում արգելոց արգելավայր տարբերությունները: Սա պայմանավորված է նրանով, որ հարցվողները ասցացնում են «Զանգեզուր» արգելավայրի ընդլայնումը կամ «Խուստուփ» արգելավայրի ստեղծումը արդեն գործող «Շիկահող» պետարգելոցի հետ, որտեղ պահպանման ռեժիմը խիստ է, իսկ ընապահպանական սահմանափակումները՝ ավելի մեծ:

Հարցման մասնակիցների գերակշիռ մասը հաստատել է ծրագրի մասին իրենց իրազեկվածությունը: Հարցվողների մի մասը լավ պատկերացում ունի արգելավայրերի տարածքների եւ սահմանների մասին, իսկ նրանցից ոմանք ծանոթ են քարտեզների նախագծերին ինչպես թղթային, այնպես էլ էլեկտրոնային տարբերակով: Հարցման մասնակիցների մյուս մասը սահմանափակ տեղեկություն ունի արգելավայրերի ստեղծման եւ ընդլայնման ծրագրի մասին:

Տեղական եւ մարզային իշխանությունների ներկայացուցիչները տեղեկացել են ծրագրի մասին միջազգային կազմակերպությունների եւ պետական կառույցների հետ համագործակցության արդյունքում հանդիպումների, սեմինարների ժամանակ: Գյուղական համայնքներում (Ծավ, Գեղանուշ, Շիկահող, ճակատեն, Լեռնածոր, Վարդասիձոր, Ներքին Յանդ) իրազեկվածությունը արգելավայրերի հարակից համայնքների մասին բարձր է: Մի քանի համայնքաբետեր հետաքրքրում են, թե համայնքային հողատարածքների եւ արոտավայրերի կոնկրետ որ մասը պետք է անցնի արգելավայրերի ենթակայության տակ: Քաղաքային համայնքների (Կապան եւ Թաշարան) ներկայացուցիչները ծանոթ են ինչպես արգելավայրերին, այնպես նաև մոտավոր տարածքներին ու սահմաններին:

Որպես կանոն, հարցվողների այս խումբը կարծում է, որ ծրագրի ֆինանսավորող կառույցներն են գերմանական GTZ եւ KfW միջազգային զարգացման կազմակերպությունները՝ գուգահեռներ տանելով երկու ծրագրերի միջեւ: «Յայատանի պահպանվող տարածքների զարգացում» եւ «Շիկահող կենսոլորտային արգելոցի ստեղծում»: Ի տարբերություն Վայոց Ձորում գործող պետական կառույցների՝ Սյունիքում հարցվողները անբավարար տեղեկություն ունեն ծրագրի մասին: Սա նշանակում է, որ իրազեկության բարձրացման ռազմավարությունը պետք է առաջին հերթին թիրախի հարցվողների այս խմբին:

«Յայանտառ»-ի Կապանի մասնաճյուղը շեշտում է համագործակցության բացակայության կամ թերի լինելու փաստը: Մինչդեռ «Շիկահող» ՊՈՎԿ-ի (այսուհետ՝ «Շիկահող» պետարգելոց) ներկայացուցիչը մտահոգություն է հայտնում այն առումով, որ աշխատանքները հեռավար են կազմակերպում, իսկ ծրագրի նախաձեռնողները/իրականացնողները սակավ են այցելում տարածք: Հարցվողը լիարժեք տեղեկություն ունի ծրագրի ֆինանսավորող եւ իրականացնող կողմերի, ինչպես նաև ծրագրի մասին եւ նշում է, որ անմիջականորեն մասնակցել է արգելավայրերի ստեղծման եւ ընդլայնման աշխատանքներին: Միաժամանակ, 20 տարվա աշխատանքային փորձի շնորհիվ հարցվողը հստակ պատկերացնում է գործող եւ նախատեսվող արգելավայրերի տարածքներն ու սահմանները: «Շիկահող» ՊՈՎԿ-ի տևօրենը հայտնում է այն մտահոգությունը, որ կան անհամապատասխանություններ տարածքի ուսումնասիրության արդյունքների եւ քարտեզների նախագծերի միջեւ: Սա կխոչընդոտի աշխատանքների իրականացմանը եւ պետական կադաստրից տվյալների ձեռքբերմանը:

արգելավայրերի ստեղծման եւ ընդլայնման մասին բավական լավ են տեղեկացված հատկապես քնապահպանական ՀԿ-ները: Նրանք տեղեկացել են ծրագրի իրականացնողների, տարածքների եւ սահմանների մասին ԲՀՀ հայաստանյան մասնաճյուղի ներկայացուցիչների հետ հանդիպումների արդյունքում: Ըստ հարցվողների՝ ԲՀՀ հայաստանյան մասնաճյուղը հանդիսանում է ծրագրի ֆինանսավորող եւ նախաձեռնող կողմը: Այնուամենայնիվ, պետք է նշել, որ հարցվողների գերակշիռ մասը տեղյակ չէ «Զանգեզուր» արգելավայրի ընդլայնման մասին:

Համաձայն տեղական քնապահպանական ՀԿ-ների, «Խուստուփ»-ը ամբողջությամբ ընդգրկում է համանուն լեռան ալպիական գոտին եւ Կապանի անտառատնտեսության տարածքի մի մասը: Տեղական ՀԿ-ները լավ են պատկերացնում նաեւ «Զանգեզուր» արգելավայրի սահմաններն ու գոտիները: Այսպես, տեղական ՀԿ ներկայացուցիչները նշում են, որ «Զանգեզուր»-ը սկսվում է Մեղրու լեռնանցքից: Այն ձգվում է Զանգեզուրի լեռնաշղթայի արեւելյան լանջերով մինչեւ Սիսիանին հարող սահմանը եւ պտտվելով հասնում է մինչեւ Վերին Գիրաթաղ: Սահմանակից է Նախիջենանին: Այս խմբի գրեթե բոլոր հարցվողների շրջանում տարածված է մեկ կարծիք, որ սահմանները կամ հստակ ճշտված չեն, կամ՝ պայմանական ընդունված: Այլ գործունեություն ծավալող ՀԿ-ները սահմանափակ տեղեկատվություն ունեն գործող եւ նախատեսվող արգելավայրերի, ինչպես նաեւ դրանց սահմանների եւ տարածքների մասին:

Մասնավոր հատվածի ներկայացուցիչները առանձնանում են ծրագրի մասին իրենց գիտելիքներով: Որպես ինֆորմացիայի աղբյուր՝ Նրանք հղում են անում քաղաքացիական հասարակության ինստիտուտներին, ինչպիսիք են՝ «Խուստուփ» եւ «Արեգա» ՀԿ-ները եւ Օրիուս կենտրոնը: Նրանք հավելում են, որ տեղեկացել են ծրագրի մասին նաեւ ՍՊՀՁ/ԳԵՀ եւ ԲՀՀ հայաստանյան մասնաճյուղի կողմից կազմակերպված սեմինարների ժամանակ: Ի համեմատ Վայոց Ձորի հարցումների՝ Սյունիքի մարզում հարցվողները առավել հստակ են պատկերացնում «Զանգեզուր» արգելավայրում ընդգրկված հողատարածքների մոտավոր ծավալները (17,000 հա-ից 20, 000 հա): Սակայն այս խմբի հարցվողներից մեկը կարծիք է հայտնել, որ իրազեկության բարձրացման նախաձեռնությունները հաճախ անտեսում են հասարակության լայն շերտերի ներգրավումը: Տվյալ հարցվողը առաջարկում է իրազեկել տեղական համայնքներին հեռուստատեսային ծրագրերի միջոցով:

Ընդհանուր առմամբ, հարցվողները կարծում են, որ ծրագրի նպատակն է կենսաբազմազանության պահպանությունը, մարդ-քսություն փոխհարաբերությունների կարգավորումը եւ աշխատատեղերի ստեղծումը:

2.2 ԱՐԳԵԼԱՎԱՅՐԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱՆՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ

Սյունիքի մարզում իրականացված հարցումները ցույց են տալիս, որ շահառուները ամենից ավելի կարեւորում են քարտեզները եւ հողօգտագործման պլանները: Սակայն քիչ կարեւորություն են հաղորդում քնապահպանական սահմանափակումներին: Քարտեզները եւ հողօգտագործման պլանները կարեւորվում են հանքարդյունաբերող ընկերությունների կողմից, քանի որ այսկերպ նրանք համաձայնության կգան սահմանների եւ տարածքների հարցերի շուրջ՝ հետագայում հողահատկացմանն առնչվող հնարավոր խնդիրներից խուսափելու համար: Յարցման մասնակից հանքարդյունաբերությունները արգելավայրերի կառավարման միջազգային փորձը եւ տարածքի ուսումնասիրությունների արդյունքները գնահատում են՝ «շատ կարեւոր»: Յաջորդը կարեւորությամբ հրավական դաշտի, օրենսդրության եւ արգելավայրերի կառավարման եւ օգտագործման մասին ինֆորմացիան է:

Արգելավայրերի ստեղծման եւ ընդլայնման ծրագրի համատեքստում հարցվողների կողմից կարեւորվում է նաեւ՝ ենթակառուցվածքի, աշխատատեղերի, տարածքի կենսաբազմազանության, հողատեսքերի եւ հողերի սեփականության, ինչպես նաև բիզնեսի զարգացման, օրինակ, գերմանական փորձի մասին տեղեկատվությունը:

Նշումներ:

ՀԿ խմբում կարծիք կա, որ ծառահատումների կանոնակարգերը հստակ չեն եւ կան օրենսդրական բացեր: Համայնքները անտառներն իրենց սեփականությունն են համարում, սակայն համայնքների շահերն ու տեսակետները հաճախ հաշվի չեն առնվում: Այս խմբի հարցվողները շեշտում են իրազեկության բարձրացման կարեւորությունը հասարակության լայն խավերի շրջանում, քանի որ ըստ նրանց՝ արգելավայրի աշխատակազմը եւս ոչ միշտ է տարբերում արգելավայրը արգելոցից: «Վորլդ Վիժն» կազմակերպության Կապանի տարածքային զարգացման գրասենյակի ներկայացուցիչը կարեւորում է արգելավայրերի կառավարման միջազգային փորձի տեղայնացումն ըստ մարզերի՝ հաշվի առնելով, օրինակ, հարավային Հայաստանի եւ հյուսիսային Հայաստանի առանձնահատկությունները եւ տեղական պայմանները:

2.3 ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ՆԱԽԸՆՏՐԵԼԻ ՁԵՎԵՐԸ

Որպես տեղեկատվության ձեռքբերման եւ հաղորդակցության միջոց՝ հարցվողները կարեւորում են հանդիպումները (ի համեմատ գրականության եւ ինտերնետ/Էլեկտրոնային փոստի): Այլ միջոցների թվում են՝ մամուլը, հեռուստատեսությունը, վերապատրաստման դասընթացները եւ սեմինարները: Շահառուների հիմնական հանձնարարականն է համայնքների հետ ուղղակի շփումը: Հաղորդակցությունը ինտերնետի/Էլեկտրոնային փոստի միջոցով գնահատվել է «քիչ կարեւոր»: Նշել է, որ ինտերնետ կապը եւ համակարգիչները գյուղերում հասանելի չեն. տեղացիները համապատասխան հմտություններ չունեն հաղորդակցման Էլեկտրոնային տարբերակից օգտվելու համար:

Տեղական եւ մարզային հշխանությունները համարում են, որ հանդիպումների կազմակերպման աշխատանքներում անհրաժեշտ է ներգրավել մասնագետների: Սա, ըստ հարցվողների, թույլ կտա ըմբռնելի եւ ամփոփ կերպով ներկայացնել խնդիրը հանրությանը: Նրանք կարեւորում են նաեւ մասնագիտական գրականության կիրառումը (օրինակ՝ հողի մշակման սկզբունքների ձեռնարկ, տեղեկատվական նյութեր, որոնք կանդրադառնան վայրի կենդանիների խնամքին անտառում. կերակրում, փշալարերի անցկացում այնպես, որ կենդանիները չվնասվեն եւ այլն):

Տեղական ՀԿ-ները կարեւորում են թիրախային խմբերի (օրինակ՝ գյուղացիական տնտեսություն վարողներ) հետ հանդիպումները, եւ իրենց աշխատանքային փորձի հիման վրա առաջարկում են, որ հանդիպումները հաճախակի չլինեն: Մասնավոր հատվածի ներկայացուցիչների համար տեղեկատվության եւ հաղորդակցության համար կարեւոր են հանդիպում-քննարկումները, տեղեկատվական սեմինարները, քանի որ նմանատիպ միջոցառումներին մասնակցում է համապատասխան եւ շահագոգիր լսարան, իսկ կապը լինում է ինտերակտիվ:

Նշումներ:

Ընդհանուր առմամբ, հարցվողներին հուզում է ավելի հանգամանալի եւ կոնկրետ ինֆորմացիա ստանալու հարցը՝ անկախ հաղորդակցման ձեւից: Հարցման մասնակիցների շրջանում կա նաեւ կարծիք, որ հանդիպումները քիչ կարեւոր են, քանի որ կազմակերպական խնդիրներ կարող են առաջանալ (օրինակ՝ համապատասխան շահառուների ներգրավում, հանդիպման վայրի ընտրություն եւ այլն): Գրականությունը գերադասող հարցվողները մասնավորեցնում են, որ այն

պետք է լինի բուկլետների կամ տեղեկատվական թերթիկների տեսքով։ Սա առավել ուշագրավ կլինի եւ միաժամանակ կխնայի գյուղատնտեսությամբ խիստ զբաղված բնակչության ժամանակը։

3 ԾԱՐԱՈՒԻՆԵՐԻ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԻ ԳՆԱՐԱՏՈՒՄ

3.1 ԾԱՐԱՈՒԻՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՄԸ ԱՐԳԵԼԱՎԱՅՐԵՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՈՒ ԸՆԴԱՅՆՄԱՆԸ

«Խուստուփ» արգելավայրի ստեղծման եւ «Զանգեզուր» արգելավայրի ընդլայնման բաղադրիչի մասով հարցումները ցույց են տալիս, որ ընդհանուր առմամբ հարցվողները դրական են վերաբերվում ծրագրին: Սակայն, գյուղերի համայնքապետերը դեմք են արգելավայրերի ստեղծման եւ ընդլայնման նախաձեռնությանը: 8 գյուղական համայնքներից 6-ում ստացված բացասական պատասխանները հիմնված են արդեն կիրառված կամ կանխատեսվող բնօգտագործման (խոտիարքեր, արոտավայրեր, համայնքամերձ անտառներից վայրի պտուղ-հատապտուղների եւ դեղաբույսերի հավաք) սահմանափակումների վրա: Կամ մտավախություններ, որ նման սահմանափակումների արդյունքում միգրացիան ավելի մեծ թափ կստանա, եւ գյուղերը կրատարկվեն: Համայնքապետերը նշում են նաեւ, որ բնօգտագործումը անտառամերձ համայնքների բնակիչների համար ունի կենսական նշանակություն, քանի որ գյուղատնտեսությունը թույլ է զարգացած: Համայնքի ներկայացուցիչները, որպես կանոն, հղում են անում «Ճիկահող» պետարգելոցի հետ կապված իրենց փորձին եւ նշում, որ համայնքները արդեն իսկ տուժել են բնօգտագործման սահմանափակումների այս պրակտիկայից: Համայնքաբնակների մտավախություններն հետեւյալն են՝ թափուկի հավաքի սահմանափակումներ, արոտավայրերի սովորական դարձած ուղիների փոփոխություններ, «Հայանտառ»-ի եւ «Ճիկահող» պետարգելոցի աշխատակիցների կողմից խիստ վերահսկողություն համայնքի վարչական սահմաններում եւ այլն:

Միեւնույն ժամանակ, շահառուների դրական վերաբերմունքը հիմնված է այն համոզմունքի կամ սպասելիքների վրա, որ ծրագիրը կերաշխավորի ինչպես բուսակենդանական աշխարհի պահպանություն, այսպես էլ աշխատատեղերի ստեղծումը: Հարցվողների մեծ մասը համոզմունք է հայտնել, որ նախանշված արդյունքներին հասնելու համար անհրաժեշտ են որոշ նախապայմաններ (համագործակցություն, անտառամերձ համայնքների շահերի կարեւորում եւ այլն):

Հանքարդյունաբերող ձեռնարկությունները դրական են վերաբերվում արգելավայրերի ստեղծմանը եւ ընդլայնմանը: Նրանք հատկապես կարեւորում են հազվագյուտ կենդանատեսակների եւ բուսատեսակների պահպանությունը: Այսուամենայնիվ, հանքարդյունաբերության ոլորտի մեկ ներկայացուցիչ շեշտում է դիտարկվող գյուղերի սահմանամերձ բնույթը, ինչը կարող է խոչընդոտել հեռավոր լեռնային բնակավայրերի զարգացման ընթացքին: Հանքարդյունաբերող հատվածի մեկ այլ ներկայացուցիչ նշում է, որ առաջին հերթին ծրագրի շրջանակներում պետք է հաշվի առնել տեղական առանձնահատկությունները եւ պայմանները, ինչպես նաև բոլոր շահառուների կարիքները: Եկոտուրիզմի ոլորտում կայուն աշխատատեղերը, ըստ հարցվողի, իրատեսական են 50 տարի հետո միայն, երբ հանքարդյունաբերության ռեսուրսները կսպառվեն:

3.2 ԾԱՐԱՈՒԻՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՄԸ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ ԱՐԳԵԼԱՎԱՅՐ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Համաձայն հարցման արդյունքների, հարցվողների կեսից ավելին դրական է մոտենում համայնքի վարչական սահմաններում արգելավայր ստեղծելու կամ այդ տարածքների հաշվին արգելավայրը ընդլայնելու նախաձեռնություններին: Սակայն, գյուղական համայնքների ներկայացուցիչները այս դեպքում են հայտնում են իրենց դժգոհությունը⁴:

⁴ Անվտահության եւ դժգոհության հիմնական պատճառները առավել հանգամանալի ներկայացված են նախորդ պարբերություններում:

Այս հարցի առնչությամբ գյուղաքնակների հիմնական մտավախությունները կապված են արգելոցային ռեժիմի լիարժեք կիրառության եւ համայնքի մուտքը տարածք արգելելու հետ: Համաձայն այս հարցվողների՝ «Հայանտառ»-ը գործում է համայնքի վարչական սահմաններում գտնվող անտառներում (մոտավորապես 803 հա), եւ այս հանգամանքը շահերի բախման ինդիք է առաջացնում բնօգտագործման իրավունքների եւ սեփականության առումով: Սյունիքի մարզականի ներկայացուցիչները նույնպես այս կարծիքի են, որ անտառային տարածքների կամ արոտավայրերի կրճատումը կարող է կրոնֆիլիկտի հանգեցնել:

Գյուղական համայնքների ներկայացուցիչները նշում են, որ մինչ օրս գործող ԲՀՊՏ-ները բացասաբար են ազդել գյուղի վրա (բնօգտագործման խիստ սահմանափակումներ, անգամ թափուկների հավաքման արգելք եւ արդյունքում միգրացիայի միտումներ): Նրանք գտնում են, որ աղքատության հիմնական պատճառը գյուղերում ԲՀՊՏ-ներն են եւ հանքարդյունաբերությունը: Միեւնույն ժամանակ համայնքապետերը տարածքների վերահսկողության ավելի ընդարձակ լիազորություններ են պահանջում, քանի որ նրանց հոգածությունն իրական է (օրինակ՝ անտառներում ծառահատումներ չեն անի, քանի որ գիտակցում են, որ սա սողանքների եւ հետեւապես գյուղի տարիհանման պատճառ կարող է հանդիսանալ): Հարցվողների այս խմբում հիշած դրական պատասխանները հիմնված են այս համոզմունքի վրա, որ արգելավայրերի ստեղծումն ու ընդլայնումը ի վերջո կհանգեցնի բնապահպանական երկարաժամկետ օգուտների:

Քաղաքային համայնքների ներկայացուցիչները դրական են վերաբերվում բնապահպանական այս նախաձեռնություններին: Նրանք համարում են, որ արգելավայրի ստեղծումը Սյունիքում ազգային անվտանգության ինդիք է, քանի որ արգելավայրերի կառավարման միջոցով սահմանամերձ բնակավայրերի վերահսկողությունը առավել կամրապնդվի: Նրանք հավելում են, որ համայնքների վարչական սահմաններում արգելավայրերի նախագծումը կապահովի գյուղաքնակների հանգստի կազմակերպման պայմանները:

Պետական կառույցները (ինչպիսին է, օրինակ, «Հայանտառ»-ի Կապանի մասնաճյուղը) կարծում են, որ դա կախված է յուրաքանչյուր գյուղի վարած քաղաքականությունից. կաև համայնքներ, որոնց ձեռնոտու է համայնքային հողերի կրճատումը, քանի որ այսկերպ նրանք կվճարեն ավելի քիչ հարկեր: Այսուամենայնիվ, «Հայանտառ»-ի ներկայացուցիչը կարծում է, որ համայնքները կընդդիմանան նման որոշմանը եւ առաջնահերթ կցանկանան ծանոթանալ քարտեզագրմանը, արգելավայրային ռեժիմի առանձնահատկություններին, բնապահպանական սահմանափակումներին, եւ այլն:

Ընդհանուր առմամբ, **ԴԿ խմբի** ներկայացուցիչները կողմ են համայնքի վարչական սահմաններում արգելավայր ստեղծելու գաղափարին այս պայմանով, որ քայլը չհակասի համայնքի շահերին: Նրանք կարծում են, որ ծրագիրը կարող է երաշխավորել ոչ միայն բնապահպանություն, այլեւ համայնքների լիարժեք ներգրավում արգելավայրերի կառավարման աշխատանքներում եւ գյուղաքնակների իրավունքների պաշտպանություն:

Մասնավոր հատվածը դրական է վերաբերվում արգելավայրերի ստեղծմանը՝ ընդունելով բնապահպանությունը եւ կայուն մարդկային զարգացումը որպես նախաձեռնության երկու հիմնարար նպատակ.

- Բնապահպանություն. Կենսաբազմազանության պահպանություն, վայրի կենդանատեսակների պոպուլյացիայի աճ, հանքարդյունաբերական պայթեցումների արգելում եւ այլն:
- Կայուն մարդկային զարգացում. Էկոլոգիական կրթություն, եթենիկ եւ մշակութային տուրիզմի զարգացում:

Նշումներ:

Հարցումների ժամանակ շատ են վերապահում պարունակող պատասխաները: Շահառուները մտավախություն ունեն, որ բնապահպանական այս նախագիծը կարող է վատթարացնել ծանր սոցիալական պայմանները եւ կողմնակի անտառօգտագործման հևարավորությունները սահմանափակելով՝ դարձնել եկամուտի այլընտրանքային աղբյուրների հարավորությունները ավելի սուր: Որպես կանոն, կողմանը արտահայտվողները համայնքային հողերի ընդգրկումը արգելավայրերում դիտում են որպես հանքարդյունաբերության եւ շրջակա միջավայրի աղտոտման հակաշիր: ԲՀՊՏ-ները ենթադրում են նաեւ մաքուր օդի եւ ջրի հեռանկարներ (ինչն այսօր առավել քան արդիական է Կապանի բնակչության կենսապայմանները բարելավելու համար):

3.3 ԱՐԳԵԼԱՎԱՅՐԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՀԱՍԱՐ

Գյուղական համայնքների ներկայացուցիչների համար արգելավայրն ունի առաջին հերթին սոցիալական եւ բնապահպանական նշանակություն: Մինչեւ մարզային եւ քաղաքային ՏԻՄ-երի պատասխաններում գերակայությունը տրվում է արգելավայրի բնապահպանական նշանակությանը: Վերջիններին հիմնականում մտահոգում է հանքարդյունաբերության ազդեցությունը հողի, ջրի եւ գյուղական համայնքների վրա:

Որպես կանոն, հարցվողները ասոցացնում են արգելավայրերի բնապահպանական նշանակությունը անտառների եւ լանդշաֆտների պահպանության, ինչպես նաեւ բնական հուշարձանների պաշտպանության հետ: Արգելավայրերի սոցիալ-տնտեսական օգուտներն են՝ ենթակառուցվածքի զարգացումը, աշխատատեղերի ստեղծումը, էկոտուրիզմը, հարավոր բարեգործական ծրագրերը, եւ այլն: Արգելավայրի ստեղծման եվ հետագա կառավարման խնդիրներում շահառուների հարավոր մասնակցությունը եվ աշակցությունը:

3.4 ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ԻՐԱԶԵԿՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ

Ըստ հարցվողների գերակշիռ մասի, համայնքները չեն մասնակցում արգելավայրերի ստեղծման եւ ընդլայնման գործընթացներին: Մինչեւ թվով քիչ հարցվողները պարզապես տեղեկացված չեն մասնակցային որեւէ գործընթացի մասին: Համաձայն որոշ շահառուների, համայնքներն առհասարակ չունեն մասնակցության որեւէ հարավորություն կամ համապատասխան իրավասություններ: Կան պատասխաններ նաեւ, որ համայնքները (օրինակ՝ Շիկահող, Ներքին Յանդ) գերծ են մասնակցությունից՝ չունենալով ընդհանուր սահմաններ նախատեսվող արգելավայրերի հետ:

3.5 ԾԱՐԱՌՈՒՆԵՐԻ ՄՈՏԻՎԱՑԻԱՆ

Գյուղական համայնքների ներկայացուցիչներն ակնկալում են, որ ծրագիրն իրենց հնարավորություն կտա ներկայացնել իրենց պահանջները եւ հանդես գալ որպես խորհրդատու բնական ռեսուրսների պահպանության եւ բնօգտագործման հարցերում: Հարցվողներից շատերը ցանկանում են մասնակցել սահմանագծման եւ քարտեզագրման, ինչպես նաեւ վերահսկողության աշխատանքներին: Մի քանի գյուղեր առաջարկում են անասնաբուժական կամ ծառատնկման ծառայություններ պայմանագրային հիմունքներով: Համայնքը կարող է մասնակցել նաեւ հակարդեհային միջոցառումների իրականացման գործընթացներին:

Պետական կառույցների համար մասնակցության ապահովման և նախապայման է բնապահպանների, այս է՝ ծրագրի իրականացնող կողմերի հետ համագործակցությունը: «Հայանտառ»-ի ներկայացուցիչը նկարագրում է իրավիճակը իբրեւ մեկ ծառ տարբեր ճյուղերով՝ մատնանշելով տարբեր հիմնարկների եւ գործընթացների միջեւ ակնհայտ փոխկապակցվածությանը եւ փոխկախվածությանը: Հարցվողը հավելում է նաեւ, որ հիմնարկի հսկիչները, որսահսկիչները, ըստ կանոնադրության (այս է՝ ի պաշտոնե) պարտավոր են հսկել տարածքի բուսակենդանական աշխարհը:

Մշակույթի նախարարության պատմության եւ մշակույթի հուշարձանների պահպանության Վայոց Ձորի եւ Սյունիքի բաժինները, ինչպես նաեւ պատմական միջավայրի պահպանության Սյունիքի Ծիգ-ը ցանկանում են ներգրավել սեմինար-քննարկումներում, մշակել ծրագրեր եւ Էկոերթուղիներ՝ ըստ մշակութային հուշարձանների առկայության: «Ծիկահող» պետարգելոցի տնօրենը առաջարկում է ԲՀՊՏ ստեղծման փորձի ներդրում եւ հեռանկարային տուրիզմի զարգացման ծրագրերի մշակում: Միաժամանակ, ԲՊՏ ներկայացուցիչը նշում է, որ հիմնարկը գուտ վերահսկողական ֆունկցիա իրականացնող մարմին է, եւ որ այդ շրջանակներում կաջակցի արգելավայրի վերահսկողության կարգի պահպանմանը:

ՀԿ-ները հետաքրքրված են մասնակցելու հատկապես արգելավայրերի կառավարման գործընթացներին: Այս կառույցների ներկայացուցիչները պատրաստակամ են համայնքների դպրոցներում երեխաների համար դասեր կազմակերպել բնության պահպանության, արգելավայրի նշանակության եւ պահպանման թեմաներով: Նրանք նշում են, որ ունեն նկարչական, ստեղծագործական շարադրությունների միջոցով մրցույթներ կազմակերպելու համապատասխան կարողություններ: ՀԿ-ները կարող են մասնակցել նաեւ որսագողության դեմ պայքարի արշավների կազմակերպման գործերին: ՀԿ-ները ցանկանում են կազմել արգելավայրի կառավարող խորհրդի մի մաս⁵:

ԵԱՀԿ Կապանի գրասենյակը կարող է օգտակար լինել կառավարման միջազգային փորձի ներդրման եւ միջազգային փորձագետների ներգրավման գործում: Կազմակերպությունը կարող է ստանձնել նաեւ մասնագիտական կամ մասնագիտացված ուսումնասիրությունների կազմակերպման եւ որոշումների կայացման գործընթացներում համայնքներին ներգրավելու, տեղեկատվության տարածման գործին խթանելու գործառույթները (Օրիուս կենտրոնների միջոցով):

Օրգանական գյուղատնտեսության ոլորտի կազմակերպությունները առաջարկում են ծրագրի շրջանակներում զարգացնել տնտեսության այս ճյուղը: Նրանք կարող են մշակել կայուն բնօգտագործման մեթոդներ եւ ծրագրեր:

Հանքարդյունաբերող ձեռնարկությունները մասնակցության բավական մեծ հետաքրքրություն ունեն: Այս խմբի հարցվողները առաջարկում են լեռնահատկացման տարածքներից էնդեմիկ բույսերի (օրինակ՝ վայրի քաջազնության) տեղափոխումը արգելավայր: Յնարավոր մասնակցություն են տեսնում նաեւ ցուցապատճենների պատրաստման եւ տեղադրման գործում՝ որպես սոցիալական պատասխանատվության իրականացման նախագծերի մի մաս, ինչը կարող է հիմնվել շրջակա միջավայրի ազդեցության գնահատման ամենամյա տվյալների վրա: Ոլորտի ներկայացուցիչների համոզմամբ, պաստառները, կնպաստեն էկոդաստիարակության զարգացմանը:

Կապանում գործող վարկատու մի կազմակերպություն պատրաստակամ է տրամադրել երկարաժամկետ ՓՄՁ զարգացման վարկեր, ինչպես նաեւ բիզնես խորհրդատվություն:

⁵ Մասնակցության այս ձեւը Վայոց Ձորում ՏԻՄ-երի նախապատվություն է:

3.6 ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԾԱՇԵՐԻ ՏԵՍԱԿՅՈՒՆԻՑ ՀԱՐԱՎՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԸ

«Ներկա պահին արգելավայրերի ստեղծումը եւ ընդլայնումը կարո՞ղ է խնդիրներ առաջացնել համայնքների շահերի տեսանկյունից» հարցին հիմնականում հետեւում են բացասական արձագանքներ: Ըստհանուր առմամբ, կարելի է փաստել, որ գյուղական համայնքները չեն ողջունում արգելավայրերի ստեղծման նախաձեռնությունը՝ ընկալելով այն իբրեւ գյուղնշանակության հողերի մակերեսների կրճատում եւ ավանդական անտառօգտագործման հնարավորությունների սահմանափակում: Նրանք մտավախություն ունեն, որ սա ի վերջո կհանգեցնի անասնապահության ետքնթացին եւ ի սպառ վերացմանը:

Միեւնույն ժամանակ, բնապահանական այս նախաձեռնությանը կողմէն են եւ ծրագրին աշակցելու պատրաստակամություն են հայտնում քաղաքային համայնքները (հանդիպումների կազմակերպում, ինտերնետի, աշխատասենյակի տրամադրում եւ այլն):

Նշումներ:

Համայնքային հողերը արգելավայրի ենթակայությանը հանձնելը հիմնական խնդիր է համայնքի շահերի տեսանկյունից, քանի որ հաճախ կողմանակի անտառօգտագործումը մերձակա համայնքների համար միակ ապրուստի միջոց է⁶: Առանձին համայնքաբնակներ կարեւորում են թափուկի հավաքի իրավունքի անհրաժեշտությունը, այլապես գյուղաքանակները կշրունակեն կտրել ծառերը, քանի որ գյուղերը գազաֆիկացված չեն: Գյուղական համայնքների գրեթե կեսը գտնում է, որ իրենց կարծիքը հաճախ անտեսվում է բնապահանական ծրագրերի նախագծման շրջանում եւ կարծում են, որ եթե արգելավայրի ստեղծումը նախանշվել է ՀՀ բնապահանության նախարարության կողմից, նրանք որեւէ կերպ չեն կարող ազդել այդ որոշման վրա: Այսպիսով, ծանր սոցիալ-տնտեսական կացությունը եւ բնապահանական սահմանափակումները նպաստում են, որ տեղացիները հակադրվեն ԲՀՊՏ ստեղծման որեւէ նախաձեռնության:

3.7 ՄԱՍՆԱԿՅՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՅՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.7.1 Տեղական եւ մարզային իշխանություններ

Կապանի տարածաշրջանում իրականացված հարցումները ցույց են տալիս, որ գյուղական համայնքները չունեն համապատասխան կարողություններ կամ շահագրգռվածություն ԲՀՊՏ ստեղծելու համար, քանի որ նրանք կախում ունեն կենսական նշանակություն ունեցող բնական ռեսուրսներից: Սակայն, որոշ դեպքերում հարցվողների այս խումբը նշում է, որ համայնքներում կամ մարզերում կան համապատասխան մարդկային ռեսուրսներ, վարչական շինություններ, որոնք կարող են ծառայել, օրինակ, որպես աշխատանքային գրասենյակ:

3.7.2 Պետական կառույցներ

«Հայանտառ»-ի ներկայացուցիչը նշում է, որ հաստատությունն ունի որակավորված աշխատակազմ, մասնագետներ: Սակայն, լավ աշխատելու եւ արդյունավետ համագործակցության համար կազմակերպության անհրաժեշտ է տեխնիկական գինվածություն: Բնապահանության պետական տեսչության աշխատակիցները կարծում են, որ ԲՀՊՏ կառավարման իրավական նորմերի բարելավված իմացությունը թույլ կտա իրենց մասնակցել ԲՀՊՏ մինիստրինգի աշխատանքներին,

⁶ Տնային տնտեսությունների նշանակալի մասը օգտվում է հարակից անտառներից. Վայրի պտուղների, հատապտուղների, դեղաբույսերի, սնկերի հավաք, որս եւ այլն:

իսկ «Շիկահող» պետարգելոց պատրաստակամ է ներդնել ԲՀՊՏ ոլորտում աշխատանքի իր փորձը: ՀՅ ՄՆ Պատմական միջավայրի պահպանության Սյունիքի մարզային ծառայությունը եւ Պատմության եւ մշակույթի հուշարձանների պահպանության գործակալության Սյունիքի եւ Վայոց Ձորի բաժինները նշում են, որ կարող են հանդես գալ որպես խորհրդատու հետագա ծրագրերի մշակման փուլում:

3.7.3 Յասարակական կազմակերպություններ

ԵՎՀԿ գործունեության շրջանակները ներառում են ինչպես Էկոլոգիական անվտանգության եւ տնտեսական օրգագուման հիմնական ուղղությունները: Կազմակերպությունն ունի ինչպես մասնագիտական կարողություններ, այնպես էլ ԵՎՀԿ արտարյուշետային միջոցների հաշվին համաֆինանսավորմամբ հանդես գալու պատրաստակամություն:

Տեղական ՀԿ-ներն ունեն համապատասխան մարդկային ռեսուրսներ արգելավայրերի ստեղծման, ընդլայնման եւ կառավարման հարցերում մասնակցելու համար: Նրանք առաջարկում են մասնագիտական փորձի ներդրում եւ խորհրդատվություն (ֆերմերային տնտեսության վարում, մեղվապահություն, շուկայի վերլուծություն եւ այլն): Կարողությունների շարքն են համալրում նաեւ տրանսպորտային միջոցները, համակարգիչները եւ աշխատանքային սենյակներ/գրասենյականները:

3.7.4 Մասնավոր հատված

«Նոր Հորիզոն» ՈւՎԿ-ն առաջարկում է Էկոլոգիական իրազեկության բարձրացման փորձի ներդրում, ինչպես նաեւ բիզնես-խորհրդատվություն եւ ուսուցանում: Յանքարյունաբերության ոլորտն ունի կորպորատիվ սոցիալական պատասխանատվության քաղաքականություն եւ այդ քաղաքականության շրջանակներում կարող է մշակել արգելավայրերի ստեղծման/ընդլայնման նախագծին աջակցող ծրագրեր (օրինակ՝ արդեն իսկ իրականացված 21 հա անտառվերականգնման աշխատանքներ): Ֆերմերային տնտեսությունն վարող կազմակերպությունները առաջարկում են գրասենյակային շենքի տրամադրում, պահեստներ եւ ամենագնաց մեքենաներ:

Այսպիսով՝ կարելի է ասել, որ Սյունիքի մարզում մասնավոր հատվածը առաջարկում է ֆինանսական եւ տեխնիկական աջակցություն, ինչպես նաեւ համագործակցության պատրաստակամություն: Յարցման մասնակիցներից շատերը համարում են, որ աջակցությունը իրենց բարոյական պարտականությունն է:

3.8 ԾԱՐԱՌՈՒՄՆԵՐԻ՝ ԱՐԳԵԼԱՎԱՅՐԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՆԵՐԳՐԱՎԿԵԼՈՒ ԿԱՐԻՔՆԵՐԸ

Տեղական եւ մարզային իշխանությունները կարծում են, որ արգելավայրերի ստեղծման եւ կառավարման գործընթացում ներգրավվելու համար նրանց անհրաժեշտ է ինչպես տեխնիկական, այնպես էլ ֆինանսական աջակցություն: Այսուհետեւ հարցվողները մեծ կարեւորություն են հաղորդում ուսուցումներին եւ իրազեկության բարձրացմանը: Յարցվողներից ոմանք նշում են, որ ծրագրի աշխատանքներում ներգրավվելու համար անհրաժեշտ են աջակցության բոլոր թվարկված ձեւերը: Ըստ որում, տեխնիկական աջակցությունը նրանք ընկալում են որպես տրանսպորտային միջոց, ջրահամակարգ, համակարգիչ, իսկ ֆինանսականը՝ աշխատավարձ/աշխատավարձի բարձրացում կամ ֆինանսական փոխհատուցում ԲՀՊՏ կենդանիների կողմից հասցած հնարավոր

վնասների համար: Մասնավորապես համայնքաբետերը խոսում են այնպիսի միջոցների անհրաժեշտության մասին, ինչպիսիք են՝ կարկերը, տնկիները, անասունները եւ այլն:

ՀԿ-ՆԵՐԸ⁷ ակնկալում են համաֆինանսավորում եւ համագործակցություն զարգացման ծրագրերի իրականացման ոլորտում: «Վորլդ Վիժն»-ի Կապանի ներկայացուցչությունը նշում է, որ կազմակերպությանը անհրաժեշտ են ուսումնական ձեռնարկներ Եկոճամբարներ կազմակերպելու համար: Այս խմբի հարցվողները ընկալում են տեխնիկական աշակցությունը՝ որպես ֆիլմեր, պոեզիանտացիաներ եւ այլն:

Մինչդեռ պետական կառույցների համար այս տիպի աշակցությունը ասոցավում է զենքի, տրանսպորտային միջոցների, այդ թվում՝ ծիերի հետ: Նրանք համոզված են, որ լիարժեք տեխնիկական գինվածություն ունեցող կառույցը կարող է առաջարկել ավելի լավ վերահսկողություն եւ երաշխավորել բնապահպանական իրավահախտումների թվի կրճատում: ԱՆ Ներկայացուցիչները նշում են, որ առաջնահերթ նրանց անհրաժեշտ է գրասենյակ: Պետական կառույցների այլ ներկայացուցիչներ շեշտում են համատեղ բնապահպանական աշխատանքի կարեւորությունը եւ բնապահպանական տեսուչների համար նախատեսված եվրոպական փորձի ներդրումը:

Մասնավոր հատվածի ներկայացուցիչները հատկապես կարեւորում են իրազեկության բարձրացումը: Ինֆորմացիան կօգնի նրանց ավելի հստակ պատկերացնել իրենց դերը ծրագրում: Իրենց հերթին մեղվապահները եւ գյուղատնտեսները կարեւորում են արտասահմանում վերապատրաստման հեռանկարները:

Հարցվողներից շատերը (համայնքապետ, մեղվապահ, անասնապահ, խոշոր հանքարդյունաբերող ձեռնարկություն) նշում են քարտեզագրման աշխատանքներում մասնակցելու իրենց ցանկության մասին՝ հավաստիանալու համար, որ իրենց շահերը եւ իրավունքները հաշվի են առնվում:

3.9 ԱՐԳԵԼԱՎԱՅՐԵՐԻ ՍՏԵՂՇՄԱՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԴՆԱՐԱՎՈՐ ԽՈԶԸՆԴՈՏԵՐԸ

Տեղական եւ մարզային իշխանությունները կարծում են, որ արգելոցային ռեժիմը եւ տեղական բնակչության դժգոհությունը կարող են խանգարել ծրագրի իրականացմանը: Այս տեսակետին հետեւում է հարցվողների առաջարկը, որ անհրաժեշտ է համագործակցել տեղական համայնքների հետ, իսկ ԲՀՊՏ դեկավարի նշանակումը պետք է լինի ընտրությունների անցկացման սկզբունքը: Սակայն, այս խմբի հարցվողներից մեկը նշում է, որ արգելավայրերը կստեղծվեն եւ կընդլայնվեն կառավարության որոշումով, եւ այս առումով խոչընդոտներ չեն կարող լինել:

Պետական կառույցների կողմից կանխատեսվող հիմնական վտանգները նույնական բնօգտագործման սահմանափակումներն են եւ արոտավայրերի, խոտհարքերի եւ այլ համայնքային հողերի մակերեսների կրճատումը: Ոլորտի ներկայացուցիչները կարծում են, որ չնայած լեռնահատկացման տարածքների հստակությանը՝ հանքարդյունաբերողները եւ անտառհատման բիզնեսը կարող են վտանգել ծրագրիը: Ըստ ԱՆ ներկայացուցիչների, խնդիր կարող են առաջանել այն ձեռնարկությունները, որոնք կարճաժամկետ շահույթ են հետապնդում:

⁷ Կապանի ՀԿ-ՆԵՐԸ եւ դոնոր կազմակերպությունների տարածքային գրասենյակները դպրոցականների հետ աշխատելու, դպրոցների ենթակառուցվածքի զարգացման եւ դրամական միջոցների գեներացման մեջ փորձ ունեն (օրինակ՝ Եկոպայուսակների վաճառքի միջոցով):

Առաջին տեսակետ ունի «Ծիկահող» պետարգելոցի ներկայացուցիչը, ում խոսքերով արգելավայրի հեռավար ստեղծումն ու ընդլայնումը (օրինակ՝ քարտեզագրումը կամ սահմանագծումը որոնք արվում են Երեւանում, սակայն իրականում չեն համապատասխանում համայնքների կամ տեղական կառույցների տեսակետներին), մասնակցային պլանավորման սկզբունքների անտեսումը, հաղորդակցության կամ տեղեկատվության պակասը, իրականացնող կողմերի սակավաթիվ այցելությունները տարածք կարող են հանդիսանալ ծրագրի ձախողման առաջին նախապայմանը:

Ըստ ՀԿ ոլորտի հարցվողների՝ արգելավայրի ստեղծման եւ հետագա կառավարման խնդիրները հետեւյալն են.

- Արգելավայրի աշխատանքների իրականացման համար ըստրված ոչ պրոֆեսիոնալ կամ անհամապատասխան որակավորում ունեցող աշխատակազմ,
- Ինարավոր բախումներ արգելավայրի աղմինհստրացիայի, ինչպես նաև ծրագրի իրականացնողների եւ համայնքների միջեւ,
- Իրագործելիության սխալ հաշվարկ,
- Շահառուների շահերի բախում (օրինակ՝ եթե սահմանվեն բնապահպանական սահամասափակումներ ինչպես համայնքների, այնպես նաև հանքարդյունաբերողների համար,
- Արգելավայրի կառավարման անցանկալի կամ անվստահելի մեխանիզմներ,
- Օրենսդրական բացեր:

Որոշ ՀԿ-ների ներկայացուցիչներ գտնում են, որ նախատեսվող արգելավայրերը չեն ծառայի բնապահպանական նպատակներին (օրինակ՝ որսագողություն արգելավայրի աշխատակիցների կողմից): Նրանք կարծում են, որ նմանատիպ արգելավայրը կնորոշի հեղինակությունը եւ առհասարակ կվտանգի ԲՀՊՏ հասկացությունը: Հետեւապես, նրանք առաջնային են համարում բարձր որակավորում ունեցող աշխատակազմի ընտրությունը: Կան ՀԿ-ներ, ըստ ում, «Խուստուկի» արգելավայրի ստեղծման եւ գործող «Զանգեզուր» արգելավայրի ընդլայնման գործընթացները անխոչընդոտ կլինեն:

Հանքարդյունաբերողները նշում են, որ անհրաժեշտ է մանրազնին ուսումնասիրել տարածքը հավաստիանալու համար, որ այնտեղ չկան հանքային ռեսուրսներ: Նրանք խիստ անհրաժեշտ են համարում ծրագրի նախաձեռնողների եւ հանքարդյունաբերողների համագործակցությունը հատկապես քարտեզագրման աշխատանքներում: Մեկ այլ խոչընդոտ, ըստ մասնավոր հատվածի, կարող է լինել տարածքների սամանամերձ լինելու փաստը:«

Հշումներ:

Տարբեր ոլորտների կամ խմբերի շահառուները նշում են, որ արգելավայրի կարեւորության եւ օգուտների վերաբերյալ ցածր տեղեկացվածությունը կարող է նույնպես խոչընդոտել ծրագրի իրականացմանը: Նրանք կարծում են, որ համայնքները այլ մոտեցում կունենան, եթե գիտակցեն, որ արգելավայրի ստեղծումը կարող է ստեղծել աշխատատեղերի իրական հնարավորություններ: Այս առումով, նրանք համարում են, որ ՀԿ-ները եւ կամ դուռը կազմակերպությունները պետք է բացատրական աշխատանքներ վարեն թիրախային այս խմբի հետ, եւ նրանց տրվեն որոշ առավելություններ, ինչի արդյունքում բնօգտագործումը գյուղական համայնքների համար խիստ սահմանափակված չի լինի:

4 ԾԱՐԱՈՒԻՆԵՐԻ ՍՊԱՍԵԼԻՔՆԵՐԸ

4.1 ԾԱՐԱՈՒԻՆԵՐԻ ԱԿՆԿԱԼԻՔՆԵՐԻ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ

4.1.1 Տեղական եւ մարզային իշխանություններ

Տեղական եւ մարզային իշխանությունների սպասելիքները ծրագրից հետեւյալն են. աշխատանքի հնարավորությունն է, բնապահպանությունը, անտառների պահպանությունը, նոր ծառերի տևկումը (որպես անտառվերականգնման մի ծեր): Սյունիքի հարցման մասնակիցները ակնկալում են նաեւ, որ արգելավայրային ռեժիմի պայմաններում որսի արգելքը թույլ կտա վերականգնել վայրի կենդանատեսակների թվակազմը: Գյուղական ՏԻՄ-երը կարծում են, որ «Խուստուկի» արգելավայրի ստեղծումը կնպաստի կենդանիների բնակմիջավայրի ապահովությանը: Միաժամանակ այն կերաշխավորի բնության տեսարժան վայրերի պահպանություն եւ բերակարգում՝ ընդլայնելով տեղացիների հանգստի կազմակերպման հնարավորությունները: Տեղական եւ մարզային իշխանություններն այն կարծիքի են, որ տարբեր ռազմավարությունների կիրառումը հասարակության լայն զանգվածներին թույլ կտա օգտվել արգելավայրի հանգստի կազմակերպման պայմաններից: Նրանք նշում են, որ «Շիկահող» պետարգելոցի ստեղծման շնորհիվ տուրիստների թիվը զգալիորեն ավելացել է: Այդուհանդերձ, համայնքների ներկայացուցիչները պարբերաբար վերադառնում են հողերի կրճատման եւ բնապահպանական սահմանափակումների իրենց մտավախությանը եւ ավելացնում, որ չնայած տուրիզմի աճին՝ գիշերակացի համար այցելուները նախընտրում են Կապանը: Միեւնույն ժամանակ, համայնքների ներկայացուցիչները ակնկալում են, որ ճիշտ պլանավորման եւ իրականացման պարագայում եկոտուրիզմը կարող է շահույթ բերել գյուղերի բնակիչներին:

Ծրջակա միջավայրի աղտոտումը տարբեր է համայնքային հողատարածքներին կից աղբանոցներ, հողի եւ ջրի աղտոտում եւ այլն: Համայնքապետերը ակնկալում են, որ գյուղերում կներդրվի համապատասխան աղբահանման համակարգ: Այս խմբի որոշ հարցվողները կարծում են, որ արգելավայրի պահպանության ռեժիմի շնորհիվ կնվազեն բնապահպանական իրավախախտումները, եւ հասարակության շրջանում պատասխանատվությունը կմեծանա:

Կապանի քաղաքապետարանի հիմնական ակնկալիքներից է եկոտուրիզմի զարգացումը: Արգելավայրերի ստեղծման եւ ընդլայնման ծրագիրը կգրավի նաեւ գիտնականների ուշադրությունը: Նրանք կարող են ուսումնասիրել տարածքներ, որոնք ընդգրկում են մինչեւ ութ գոտի: Տուրիստների այցելությունը կնպաստի տնտեսության աշխատացմանը, Ենթակառուցվածքների զարգացմանը, հյուրատների, առեւտրի եւ այլ ծառայությունների բարելավմանը: Ծրագիրը կարող է նպաստել անգամ տեղական օդանավակայանի վերաբացմանը: Արգելավայրային պահպանության ռեժիմի շնորհիվ մարզը ավելի տեսանելի կրառնա եւ կունենա ավելի բարձր հեղինակություն:

Որոշ գյուղերում ակնհայտ դժգոհությունը եւ անվստահությունը կարելի է հաղթահարել հետեւյալ կերպ: Արգելավայրերի ստեղծման եւ ընդլայնման գործընթացներում պետք է ապահովել համայնքի մասնակցությունը, ինչպես նաեւ պաշտպանել բնօգտագործման նրանց իրավունքները: Ըստ որում՝ համայնքը եւս պետք է հսկավորություն ունենա մասնակցելու ռեկրեացիայի եւ տուրիզմի եւ եկամտի այլընտրանքային աղբյուրների ստեղծման ծրագրերին:

4.1.2 Պետական կառույցներ

Ծրագրի հաջող իրականացման համար պետական կառույցները առանձնակի նշանակություն են վերագրում համագործակցությանը: Մասնավորապես «Հայանտառ»-ը նշում է, որ փոխգործակցությունը արգելավայրի արմինհստրացիայի եւ «Հայանտառ»-ի միջև կնպաստի բնապահպանական նախաձեռնությունների արդյունավետության բարձրացմանը: ՄՆ Ներկայացուցիչները գտնում են, որ ժամանակն է վերականգնել գերշահագործված բնական ռեսուրսները: Նրանց պատկերացումների համաձայն, արգելավայրերի ստեղծումն ու ընդլայնումը կնպաստի ոչ միայն յուրահատուկ լանդշաֆտների եւ կենսաբազմազանության պաշտպանությանը, այլև՝ օդի, ջրի եւ հողի աղտոտման նվազմանը: Այս խմբի հարցվողները կարծում են, որ եւ՝ որսագողությունը, եւ՝ ծառահատումները չեն կարող ի սպառ վերանալ, քանի որ գյուղական համայնքներում խիստ կարիքավոր ընտանիքներ կան: Նրանց համոզմունքն է նաեւ, որ անտառից օգտվելու մարդկանց իրավունքը չպետք է սահմանափակվի՝ միգրացիայի միտումները կանխելու նպատակով:

«Ճիկահող» պետարգելոցի տնօրենը ակնկալում է, որ կենդանիների արեալների համար միգրացիոն ուղիները կմեծանան, իսկ ԲՊՏ հիմնական սպասելիքը վայրի կենդանիների պոպուլյացիայի աճն է: Միաժամանակ, նրանք կարծում են, որ լիցենզիայով որսի օրինականացումը կնպաստի օտարերկրյա ներդրումների ներգրավմանը: Պետական կառույցները շեշտում են իրազեկության բարձրացման կարեւորությունը, որպեսզի մարզի բնակչությունը ավելի հստակ պատկերացնեն արգելավայրի եւ արգելոցի տարբերությունը: Այս կարծիքին է նաեւ «Վորլդ Վիժն»-ի Կապանի ՏԶԾ գրասենյակը:

Այս խմբի հարցվողներից շատերը կարծում են, որ արգելավայրերի ստեղծման եւ ընդլայնման ծրագիրը կարող է որոշակի լուծում տալ որսագողությանը եւ բնափայտի ապօրինի հատումներին, քանի որ բնապահպանական իրավախախտումների դիմաց կիրառվում են քրեական եւ վարչական տույժեր գործող ԲՅՊՏ-ներում: Նրանք հույս ունեն նաեւ, որ արգելավայրերի ստեղծումն ու ընդլայնումը կնպաստի մուֆլոնի պահպանությանը Զանգեզուրում, իսկ բեզոարյան այժինը՝ խուստուփի տարածքում:

4.1.3 Յասարակական կազմակերպություններ

ՅԿ ոլորտը գտնում է, որ ճիշտ կառավարման մեխանիզմները կարող են լուծում տալ Էկոլոգիական, սոցիալ-տնտեսական, ինչպես նաև հնարավոր մարդկային ռեսուրսների խնդիրներին: Ոլորտի ներկայացուցիչները կարեւոր են համարում գուգահեռ համայնքային զարգացման ծրագրերը, ինչպես նաև՝ արգելավայրերի վերահսկողության եւ մոնիթորինգի պատշաճ միջոցների ընտրությունը: ՅԿ ոլորտի հարցվողները հավելում են, որ վերահսկողության եւ մոնիթորինգի մասով պետք է կազմվեն հաշվետվություններ՝ գյուղական համայնքների շրջանում իրազեկությունը բարձրացնելու նպատակով: ՅԿ-ները ակնկալում են նաեւ, որ արգելավայրերը կիրանեն գիտական հետազոտությունների եւ բնապահպանական մոնիթորինգի զարգացումը: Նրանք հույս ունեն, որ Էկոլոգիական կրթության⁸ ներկայացման արդյունքում տեղական բնակչության վերաբերմունքը բնապահպանության եւ ԲՅՊՏ նկատմամբ կփոխվի: Որոշ բնապահպանական ՅԿ-ներ ակնկալում են, որ արգելավայրերի ստեղծման եւ ընդլայնման ծրագիրը կարող է նպաստել նաեւ աղբահեռացման համակարգի ներդրմանը:

⁸ Օրինակ՝ ԲՅՊՏ-ն կստեղծի առավել բարենպաստ պայմաններ մեղվապահության համար, ինչը իր հերթին կիրանի մրգատու ծառերի բերքատվությունը եւ կապահովի վայրի թռչունների եւ կենդանիների կերպ:

Ի հավելում վերոնշյալի, այս խմբի հարցվողների սպասելիքներն են՝ կենսաբազմազանության պահպանությունը, անտարի պաշտպանությունը եւ որոշումների կայացման գործընթացներում լայն հասարակության ակտիվ ներգրավումը։ Այս խմբի շահառուների շրջանում կարծիք կա, որ գործող ԲՀՊՏ-ները դեռ չեն լուծել բնափայտի ապօրինի հատման եւ որսագողության խնդիրները։

4.1.4 Մասնավոր հատված

Մասնավոր հատվածի ներկայացուցիչները կարծում են, որ արգելավայրերի ստեղծման ու ընդլայնման ծրագրի շրջանակներում էկոտուրիզմը տնտեսության ամենախոստումնալից ճյուղերից է։ Ոլորտի ներկայացուցիչները վստահ են, որ էկոտուրիզմը կարող է ստեղծել այլընտրանքային եկամուտի (որսհսկիչներ, արգելավայրի աշխատակազմ եւ այլն) աղբյուրներ եւ նպաստել աղքատության կրճատմանը։

Յանքարդյունաբերող կազմակերպությունները ակնկալում են, որ արգելավայրերի ստեղծման ու ընդլայնման ծրագրի շնորհիվ կրարելավվի ջրի որակը, կվերականգնվեն ձկնատեսակները (ուժինտրորուկցիա) եւ կրարձրանա բնապահպանական իրազեկվածության մակարդակը։ Վրգելավայրերի առկայության դեպքում բնապահպանական իրավախախտումների հետեւանքով կենդանական եւ բուսական աշխարհին պատճառված վնասի հատուցման տուգանքները ավելի խիստ կլինեն, իսկ իրավախախտումների դեպքերը կնվազեն։ Ինչ վերաբերում է անտարի հիմնական արգասիքին՝ բնափայտային արտադրանքին, պետք է թույլատրելի լինեն միայն սանիտարական հատումները։

Յարցվողներից ոմանք կարծում են, որ արգելավայրը միանշանակ դրական նշանակություն ունի հատկապես ապագա սերունդների համար։ Յամաձայն քաղաքային համայնքների՝ էկոլոգիական կրթությունը ըսորդիմադիր մոտեցումների եւ համոզմունքների եւ իրազեկության բարձրացման առաջին լուծումն է։ Նրանք պատրաստակամ են աջակցել ծրագրի իրականացմանը եւ խնդրանք են հայտնում ներգրավել իրենց համայնքները (Կապան եւ Զաջարան)՝ որպես ծրագրի հիմնական շահառուներ ծրագրի իրականացման հաջորդ փուլերում։ Քաջարանի քաղաքապետարանի առաջարկությունն այս է, որ ԲՀՊՏ ներդրումներն ու ծախսերը հրապարակվեն մամուլում՝ գործընթացների թափանցիկությունն ապահովելու համար։

Ըստ հարցվողների՝ իրատեսական արդյունքների հասնելու համար ԲՀՊՏ պլանավորումը եւ կառավարումը պահանջում է կուր քաղաքական կամք եւ մեծ ռեսուրսների (այդ թվում՝ ժամանակի) ներդրում։

4.2 Ո՞Վ ՊԵՏՔ Է ԻՐԱԿԱՆԱՑԻ ՎԵՐԱՅՍԿՈՂՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

Յարցվողների մեծ մասը գտնում է, որ համայնքները պետք է ներգրավվեն արգելավայրերի կառավարման գործընթացում։

ՅԿ-ները կարեւորում են քաղաքացիական հասարակության ինստիտուտների դերը արգելավայրերի կառավարման եւ վերահսկման գործընթացներում։ Յարցվողները նշում են, որ ապակենտրոնացված կառավարումը կնվազեցնի կոռուպցիոն ռիսկերը։ Որոշ ՅԿ-ներ ունեն այն տեսակետը, որ արգելավայրը կարող է համակառավարվել, օրինակ, ԲՊՏ-ի, ՅԿ-ների, գյուղական ՏԻՄ-երի եւ այլ հաստատությունների կողմից։

Տեղական եւ մարզային իշխանությունները գտնում են, որ արգելավայրերի կառավարումն ու վերահսկողությունը պետք է իրականացվեն ՏԻՄ-երի, քաղաքացիական հասարակության ինստիտուտների եւ անպայմանորեն գյուղական համայնքների մասնակցությամբ: Քաղաքապետարանների մակարդակում պատկերացումները հետեւյալն են. համայնքները պետք է ունենան գուտ մասնակցության իրավունք, սակայն չպետք է պատասխանատու լինեն արգելավայրերի կառավարման համար, քանի որ չունեն համապատասխան ռեսուրսներ: Այս խմբի հարցվողների մեջ մասը նույնպես նախընտրում է արգելավայրի համակառավարման տարբերակը (ՀՀ ԲՆ, միջազգային կառույցներ, համայնքներ, արգելավայրի արմինիստրացիա, բնապահպաններ եւ այլն):

«Դայանուառ»-ը եւ ՀՀ ՍՀ Պատմության եւ մշակույթի հուշարձանների պահպանության գործակալության պատասխանատունները նույնպես շեշտում են արգելավայրերին հարակից համայնքների ներգրավման կարեւորությունը: Միևնդեռ ՀՀ ՍՀ Պատմական միջազգայրի պահպանության Սյունիքի մարզային ծառայության ներկայացուցիչը նշում է, որ արգելավայրերի կառավարման պատասխանատվությունը պետք է ստանձնեն միջազգային կազմակերպությունները մինչեւ որ արգելավայրի կառավարման պրակտիկան յուրացվի տեղական կառույցների կողմից: «Ծիկահող» պետարգելոց եւ ԲՀՊ-ն համարում են, որ արգելավայրերի վերահսկողությունն ու կառավարումը պետք է իրականացվի ԲՆ կողմից:

Մասնավոր հատվածի տեսակետը առանձնանում է մացյալից՝ նախապատվություն տալով պետական կառույցների կողմից արգելավայրերի կառավարմանը:

Նշումներ:

Տեղական եւ մարզային իշխանությունները շեշտում են որակավորված մասնագետների ընտրության կարեւորությունը արգելավայրի արդյունավետ կառավարման համար: Մի քանի հարցվողներ գտնում են, որ արգելավայրի կառավարման եւ վերահսկողության գործընթացում կարող են ներգրավվել նաեւ ոստիկաններ եւ հանքարդյունաբերության մասնագետներ:

4.3 ԲՀՊ-ի ԱՇՐԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԾԱՀԱՈՒՏԵՐԻՑ ՅՈՒՐԱԶԱՆՉՅՈՒՐԻ ԳՈՐԾՈՒԵՈՒԹՅԱՆ ՎՐԱ

4.3.1 Դրական ազդեցություն

Հիմնականում տեղական եւ մարզային իշխանությունների եւ ՀԿ-ների կարծիքով է, որ ԲՀՊ-ները դրական ազդեցություն կունենան համայնքների գործունեության զարգացման վրա (Էկոտուրիզմի միջոցով այլընտրանքային եկամուտի աղբյուրների հնարավորություններ): Այս համատեքստում ՀԿ-ները տեսնում են նաեւ ԲՀՊ-տուրիստական գործակալություններ կապը:

Համաձայն տեղական եւ մարզային իշխանությունների՝ մարզային իշխանությունները կարողություններ զարգացնելու հնարավորություն կստանան եւ կսփորեն փորձի փոխանակման արյունաքում: Դեռական կառույցները նույնպես կարողություններ կստեղծեն եւ կընդլայնեն գործունեության դաշտը: Արգելավայրը ընդհանուր առմամբ, կրաքարացնի մարզի հեղինակությունը⁹: Դուռը կազմակերպությունները մարզում ծրագրեր ֆինանսավորելու/իրականացնելու ավելի մեծ հետաքրքրություն կունենան: Արգելավայրի առկայության շնորհիվ նրանք կարող են մշակել հստակ ծրագրեր եւ ակնկալել դրական արյունաքումներ: Այսպիսով, նրանք կանեն միմիայն արդարացված եւ նպատակային ներդրումներ: Արգելավայրը դրական կազմի տուրիստական գործակալությունների վրա, քանի որ կզարգանա

⁹ Հարցվողները բերում են Տաթեւի վանական համալիրի օրինակը:

Եկոտուրիզմը, կնախագծվեն Եկոերթուղիներ, կկառուցվեն այցելուների տեղեկատվական կենտրոններ, կբարելավվի ենթակառուցվածք եւ կներգրավվեն տուրօպերատորներ և անդամներ: Այս համատեքստում տեղական եւ մարզային իշխանությունները կարեւորում են մշակութային եւ պատմական վայրերի առանձնահատկությունները եւ արժեքը: Նրանք առաջարկում են անդրադառնալ տեղանքի պատմագրությանը հարցագրույցների եւ երկխոսությունների ժամանակ գրառումներ անելու եղանակով¹⁰:

Համաձայն պետական կառույցների՝ ծրագրի շրջանակներում նախագծվող Եկոտուրիզմը կստեղծի աշխատանքի հնարավորություն համայնքների համար: Սա կնպաստի նաեւ տեղական մակարդակում կրթական պահանջարկի ձեւավորմանը (անտառագիտություն, բնապահպանություն, գյուղատնտեսություն եւ այլն): Արգելավայրը կարող է բարձրացնել մարզի հերինակությունը եւ տեսանելիությունը: արգելավայրերի ստեղծման եւ ընդլայնման ծրագրիը քաղաքացիական հասարակության ինստիտուտներին հնարավորություն կտա ներգրավվել խորհրդատվական աշխատանքներում եւ կրթական/ուսումնական ծրագրերում: **Դուռական կառույցները** կարող են իրականացնել արգելավայրի ավելի լուրջ վերահսկողություն: **Դուռըները** կարող են ներկայացնել նոր ծրագրեր եւ աջակցել կենդանատեսակների վերականգնման (ռեինտրոդուկցիա) հարցում: **Տուրիզմը** կարող է զարգանալ, օրինակ, թռչնադիտման արշավների մասնակիցների կամ Էնդեմիկ բույսերի հետազոտությամբ գրադարձող գիտնականների այցելությունների շնորհիվ: Եկոտուրիզմն իր հերթին կնպաստ ի ենթակառուցվածքների զարգացմանը եւ բարելավմանը, վայրի պտուղատապտուղների շուկայահանմանը:

Համաձայն քաղաքացիական հասարակության ինստիտուտների՝ տուրիզմի զարգացումը օգուտ կրերի համայնքներին (հյուրատներ, հուշանվերների արտադրություն-վաճառք, այցելուների տեղեկատվական կենտրոններ եւ այլն): Բնապահպանական ծրագրերում համագործացությունը կամ համատեղ աշխատանքը կփոխի մարդկանց վերաբերմունքը: Արգելավայրերի ստեղծումն ու ընդլայնումը կնպաստի նաեւ մասնավոր հատվածի գործունեության զարգացմանը (հյուրատներ, հյուրանոցներ, առեւտրի աշխատացում եւ այլն): **ՀԿ-ները** կզարգացնեն կարողությունները, կկազմեն եւ կիրականացնեն կանոնակարգված բնօգտագործման գծով վերապատրաստման ծրագրեր եւ կկազմակերպեն ծառատնկման արշավներ: **Պետական կառույցների** վերահսկողական աշխատանքը կիշտանա, իսկ ֆինանսական ռեսուրսները ավելի նպատակային կօգտագործվեն:

Համաձայն մասնավոր հատվածի՝ արգելավայրերի ստեղծումն ու ընդլայնումը կարող ստեղծել ինչպես սոցիալ-տնտեսական օգուտներ (օրինակ՝ աշխատատեղեր) համայնքի համար, այնպես նաեւ՝ բնապահպանական: **Մարզային իշխանությունների** գործունեությունը կակտիվանա հիմնականում եկոտուրիզմի զարգացման շնորհիվ: Արգելավայրերը կարող են կանխել ներքին միգրացիայի (գյուղական բնակավայրերից դեպի քաղաք արտագաղթը) եւ այս կերպ նույնական օժանդակել մարզային իշխանությունների գործունեությանը: **ՀԿ-ները** դրամաշնորհներ կստանան եւ բնապահպանության ոլորտում աշխատանքներ կիրականացնեն: Արգելավայրերը կարող են նպաստել նաեւ պետական կառույցների եւ արգելավայրի աղմինհստրացիայի միջեւ համագործակցության զարգացմանը. արգելավայրի տեսուչները կկիսեն պետական կառույցների աշխատանքը եւ տեսչական պարտականությունները: Արգելավայրերը դրական կազդեն տուրիզմի զարգացման վրա, քանի որ Սյունիքը բավական հարուստ է բնապատմական հուշարձաններով (ինչը կարող է խթանել տուրիստների հոսքը մարզ):

Գյուղական համայնքներից մի քանիսը կարծում են, որ ԲՅԴ-ն չի կարող որեւէ դրական ազդեցություն ունենալ համայնքների վրա:

¹⁰ Տեղացիների գիտելիքները ինֆորմացիոն հիմք կլինեն: Տեղանքին հատուկ ուշագրավ շատ փաստեր կամ ավանդապատումներ (որոնք կարող են հետաքրքիր լինել այցելուների համար) թղթին մինչ օրս չեն հանձնվել:

4.3.2 Բազասական ազդեցություն

Առհասարակ մարզում կողմանակի անտառօգտագործման ձեւերը մեծ տարածում ունեն եւ հիմք են հանդիսանում տնտեսվարման տարբեր ձեւերի կիրառման համար. Վայրի պտուղների, հատապտուղների եւ ընկույզների, սնկերի, ինչպես նաև ուտելի բույսերի, դեղաբույսերի եւ տեխնիկական հումքի հավաք ու մթերում: **Դամաճայն տեղական եւ մարզային իշխանությունների** բնապահպանական սահմանափակումները իրենց ազդեցությունն են ունենում ոչ միայն հարակից համայնքների, այլև մերձակա քաղաքների վրա, քանի որ վայրի բույսերը կամ հատապտուղները այնու բացակայում են քաղաքային շուկաներից (սրան հետեւում են ներկրում, գների թանկացումը եւ այլն): Նման մտահոգությունն են հայտնում Կապանի քաղաքապետարանի ներկայացուցիչները: Նրանք կարծում են նաեւ, որ ԲՀՊՏ-ները որոշ չափով կարող են սահմանափակել բնօգտագործումը եւ դժգոհություններ առաջացնել, եթե պետական կառույցների (օրինակ՝ «Յայանտառ») տարածքները անցնեն ԲՀՊՏ ենթակայության տակ:

Դամաճայն քաղաքացիական հասարակության ինստիտուտների արգելավայրերի ստեղծման/ընդլայնման արդյունքում անտառօգտագործումը համայնքների համար կլինի խիստ սահմանափակ, ինչը գազամատակարարման բացակայության հետ մեկտեղ կհանգեցնի ավելի լուրջ ինդիրների: **Փոքր բիզնեսը** կտուժի, եթե այն կապած է, օրինակ, կողմանակի անտառօգտագործման հիմնական ձեւերի կամ հանքարդյունաբերության հետ: **Տուրիզմը** կտուժի այլքանով, որ մուտքը որոշ տարածքներ կարող է արգելվել:

Նշումներ:

Բոլոր շահառուների վրա արգելավայրի ստեղծումը բացասաբար կազդի, եթե գործողությունները լինեն անհամածայնեցված, իսկ ծրագրի մասին իրազեկվածությունը՝ անբավարար: Այսպիսով, շահառուների գործողությունները պետք է համաճայնեցվեն ու համակարգվեն, այլապես ֆինանսական միջոցները կփոշիանան:

Դամաճայն պետական կառույցների բնական ռեսուրսների եկարաժամկետ եւ ռացիոնալ օգտագործման կանոնները եւ բնապահպանական սահմանափակումները կարող են բացասաբար ազդել համայնքների վրա: Կիրճատվեն արոտավայրերի, խոտհարքերի եւ գյուղնշանակության այլ հողատարածքների մակերեսները, իսկ անասնապահության զարգացման հեռանկարներն այլեւս անիրատեսական կլինեն: **Պետական կառույցների** առումով, օրինակ, ՄՆ-ն հարկադրված կլինի պատմամշակութային հուշարձանների վերականգնման համար թույլտվության հայտ ներկայացնել ՀՀ կառավարություն եւ հայտնվել բյուրոկրատական քաշըշուկներում:

Ըստ հարցվողների, բնապահպանական սահմանափակումների պատճառով ֆինանսական վնասներ կկրեն բիզնեսի տարբեր ձեւերը. հանքարդյունաբերությունը, գյուղատնտեսությունը, անտառամթերումը եւ բնափայտի վերամշակումը եւ այլն: Սահմանամերձ գոտում ռազմական հսկիչ կայանների առկայությունը կարող է խոչընդոտել տուրիզմի զարգացմանը:

Դամաճայն մասնավոր հատվածի համայնքների սահմանամերձ բնույթը արդեն իսկ գյուղերին մասնակից չդարձնելու նախապայման է: Ավելին՝ արգելավայրերի ստեղծումն ու ընդլայնումը կսահմանափակի գյուղատնտեսական նշանակության հողերի օգտագործումը եւ կենսական նշանակության դեղաբույսերի, սնկերի, պտուղ-հատապտուղների հավաքը: ԲՀՊՏ-ները կարող են խոչընդոտել նոր ճանապարհների կառուցման ծրագրերին, եւ սա կարող է բացասաբար ազդել մարզային իշխանությունների վրա: ԲՀՊՏ ստեղծման/ընդլայնման դեպքում պետական կառույցների տեսչական աշխատանքների ծավալները կավելանան:

4.4 ԾԱՐԱՌՈՒՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԿԱՐԻՁՆԵՐԸ


Սյունիքում իրականացված հարցումների վերապատրաստման կարիքները: Նկարում ներկայացված են ուսուցման թեմաները¹¹, որոնք գնահատվել են 1-5 գնահատման սանդղակով, որտեղ 1-ը «անհրաժեշտ չէ», իսկ 5-ը՝ «խիստ անհրաժեշտ»:

Ներկայացված են նաեւ հարցվողների չորս խմբերի կողմից գնահատված ուսուցման թեմաների միջինացված ցուցանիշները: Յարցման արդյունքները ցույց են տալիս, որ հարցվողները մեծ կարեւորություն են հաղորդում «կենդանիների պահպանություն», «բույսերի պահպանություն», «ռեկրեացիա եւ եկոտուրիզմ», «ընապահպանական օրենսդրություն», ինչպես նաեւ «արգելավայրերի կառավարման պլանավորում» թեմաներին:

Պետական կառույցների համար հատկանշական են «բույսերի պահպանություն» եւ «օտար լեզուներ» ուսուցման թեմաները: «Ուկրեացիա եւ եկոտուրիզմ», ինչպես նաեւ «ընապահպանական օրենսդրություն» թեմաները հավասարապես կարեւոր են բոլոր խմբերի համար: Մինչդեռ «արոտավայրերի եւ խոտհարերի կայուն կառավարում», «որսատևեսության կազմակերպում», «օտար լեզուներ» եւ կարեւորությամբ:

«Յավատարմագրային կառավարում»-ը ամենաքիչ կարեւորություն ունեցող թեման է՝ ըստ հարցման արդյունքների: ՀԿ-ները քիչ կարեւորություն են հաղորդում ուսուցման գրեթե բոլոր թեմաներին, բացառությամբ որսատևեսության կազմակերպման: Մինչդեռ պետական կառույցները եւ ՏԻՄ-ները վերապատրաստման գրեթե բոլոր թեմաները կարեւոր են համարում, բացառությամբ հավատարմագրային կառավարման: Վերջապես, համակարգչի ուսուցումը ավելի քիչ պահանջարկ ունի մասնավոր հատվածի ներկայացուցիչների կողմից՝ ի համեմատ պետական կառույցների, ՏԻՄ-ների եւ ՀԿ-ների: Սույնը վերաբերում է օտար լեզուների ուսուցմանը: Յարցվողների կողմից առաջարկվող թեմաներն են՝ եկոկրթությունը (եկոլաբորատորիաների եւ եկոճամբարների կազմակերպման եղանակով) եւ մեղվաբուժության մեթոդները:

արդյունքները ամփոփում են նաեւ շահառուների



«համակարգիչ» թեմաները զիշում են իրենց

¹¹ Յարցաշարում ներկայացվել են ուսուցման տաս թեմաներ

«Վորլդ Վիժն» կազմակերպության Կապանի Տ2Ծ գրասենյակի ներկայացուցիչը նշում է, որ թվարկված երկու ուսուցման ծրագրերն իրենց մեջ ամփոփում են մնացյալը Եւ ամենակարեւորն են ԲՀՊԸ ստեղծման/ընդլայնման ծրագրի համատեքստում։ Դրանք են՝ (1) «բնապահպանական օրենսդրություն Եւ կանոնակարգեր» Եւ (2) «արգելավայրի կառավարման պլանավորում» թեմաները։

5 ԱՄՓՈՓՈՒՄ ԵՎ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

5.1 ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Յիմսվելով ուսումնասիրության արդյունքների վրա՝ կարելի է եզրակացնել, որ Սյունիքում անտառային եւ գյուղատնտեսական հանդակները, ինչպես նաև հանքային ջրերի բնական աղբյուրներով հարուստ ընդերքը կենսական նշանակություն ունեն ինչպես գյուղական, այսպես էլ քաղաքային համայնքների համար: Նույն ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ իիմսական շահառուները՝ գյուղական համայնքները, բացասական են վերաբերվում բնապահպանությանը, քանի որ գործող ԲՀՊՏ-ները դեռ չեն տվել շոշափելի օգուտներ: Դարցման մասնակից բոլոր խմբերը նշում են, որ գյուղական համայնքները չունեն իրենց հուզող հարցերը բարձրաձայնելու համապատասխան կառողություններ՝ ի տարբերություն բնապահպանական կամ պետական կառույցների: Ըստ որում, գյուղական համայնքները մտավախություն ունեն, որ նախորդ ծրագրերից դասեր չեն քաղվի եւ համապատասխան եզրակացություններ նույնպես չեն արվի:

Միևնույն քաղաքային համայնքները գտնում են, որ ծրագիրը բավական խոստումալից է, իսկ իրենք՝ պատրաստակամ մասնակցելու եւ աջակցելու ծրագրին:

Ծրագրի ոլորտում ընդգրկված իիմսական պետական կառույցներն են «Յայանտառ»-ը եւ ԲՊՏ-ն: Բնապահպանական պետական կառույցները ունեն ներկայացուցչություն մարզային եւ այլ մակարդակներում, սակայն այսօրվա դրությամբ աշխատակազմի հմտությունները, բյուջեն եւ տեխնիկական միջոցները բավարար չեն պարտականություններ իրականացնելու համար: Նրանք ակնկալում են, որ ծրագիրը հնարավորություն կընծեռի ստանալ ֆինանսական աջակցություն հիմնական կարիքները հոգալու եւ տեսչական աշխատանքները համապատասխանորեն իրականացնելու համար:

Պետական կառույցների հիմնական ակնկալիքներն են սոցիալ-տնտեսական պայմանների բարելավումը, համայնքային զարգացումը եւ անտառային ռեսուրսների կայուն կառավարումը: ՀՅ ՄՍ ներկայացուցիչների հիմնական մտավախությունն այն է, որ ռեսուրսների եւ հնարավորությունների սակավությունը կարող է ծրագրում իրենց լիարժեք մասնակցության խոչընդոտ հանդիսանալ: Այսում նրանք նրանք հետաքրքրված են աջակցելու ծրագրի իրականացմանը, եթե ստեղծվեն համագործակցության կայուն հիմքեր եւ նրանց հուզող բնապատմական հարցերը եւս հաշվի առնվեն:

ԵԱՀԿ Կապանի գրասենյակի գործունեության հիմնական ոլորտներն են՝ տնտեսական զարգացումը եւ բնապահպանությունը: Ըստ «Վորլդ Վիժն»-ի Կապանի S2Ծ գրասենյակի համայնքային զարգացման ծրագրերը բնապահպանական նպատակներին հասնելու արդյունավետ միջոց են, քանի որ աղքատության պատճառով է, որ անտարի բնական ռեսուրսները գյուղական բնակչության կողմից ենթարկվում են գերշահագործման: Այս առումով, նրանք ցանկանում են զարգացնել հետագա համագործակցությունը ԲՀՊՏ բնապահպանական ծրագրերի հետ:

Բացի միջազգային կազմակերպություններից, որոշ տեղական ՀԿ-ներ եւ միջազգային կազմակերպությունների ներկայացուցչություններ ծավալուն գործունեություն են իրականացնում բնապահպանության, գյուղատնտեսության, աղքատության հաղթահարման, Էկոլոգիական կրթության եւ այլ որոտներում: Դատկապես Կապանի շրջանում մեծ թվով ՀԿ-ներ ակտիվ են եւ ցանկանում են աշխատել՝ որպես ծրագրի գործընկերներ: Այսուամենայնիվ, ՀԿ-ների ինստիտուցիոնալ, տեխնիկական եւ ֆինանսական կարողությունները տարբերվում են՝ ըստ միջազգային կառույցների ֆինանսավորման միջոցների:

Բիզնեսի հիմնական ձեւերը Սյունիքում համբարդյունաբերությունը եւ գյուղատնտեսությունն են (մեղապահություն, անտառի կողմանարդյունքի հավաք-մթերում-շուկայահանումը եւ այլն): Մասնավոր հատվածը բավական ուժեղ է Սյունիքում, սակայն ԲՀՊՏ հարակից համայնքների թևակիշների համար այս չի առաջարկում Եկամուտի բավարար միջոցներ: Փոխարենը՝ նրանք տեսնում են իրենց հնարավոր մասնակցությունը՝ որպես ծրագրի ակտիվ գործընկերներ եւ համաֆինանսավորող կողմ:

Այլընտրանքային Եկամուտի աղբյուրների (տուրիզմ/Էկոտուրիզմ) ստեղծման տեսանկյունից տեղական բնակչությունը մասնակցություն ունենալու մեծ պատրաստակամություն ունի: Յամածայն շահառուների կարծիքների, արգելավայրերի ստեղծման եւ ընդլայնման խթանումը կարեւոր է մի քանի պատճառներով:

- **Գյուղական համայնքների տնտեսական զարգացում:** Տուրիզմը կարող է հավելյալ Եկամուտներ բերել ԲՀՊՏ հարակից համայնքներին եւ ապահովել նրանց ապրուստը:
- **Բնապահպանական նախաձեռնություններում համայնքային մասնակցության երաշխիքների ստեղծում:**
- **Բնապահպանական իրազեկվածություն.** ԲՀՊՏ տարածքում տուրիզմից բխող ուղղակի կամ անուղղակի օգուտները մարդկանց ավելի իրազեկ կրաքնեն ԲՀՊՏ ռեսուրսների եւ դրանց նշանակության առումով: Էկոհամակարգերի պաշտպանության կարեւորության գիտակցումը կիանգեցնի բնապահպանական աշխատանքներում բնակչության ավելի ակտիվ ներգրավման:

Պարբերական հղումները տուրիզմին նշանակում են, որ ընդհանուր առմամբ հարցման մասնակից տեղական բնակչությունը հավատացած է, որ տնտեսության այս ճյուղը դրական ներգործություն կունենա տնտեսական աճի, ծառայությունների ոլորտի բարելավման, տնտեսության դիվերսիֆիկացման, տրանսպորտի եւ ենթակառուցվածքների բարեկարգման/զարգացման առումով: Այսպիսով, համայնքային տուրիզմի նախաձեռնությունները ենթադրում են մասնակցություն, բնապահպանություն եւ բիզնեսի զարգացում (Եկամուտների գեներացում):

Սյունիքում իրականացված հարցումները ցույց են տալիս, որ ԲՀՊՏ նշանակությունը, ըստ համայնքային խմբերի, հետեւյալն է:

- Վայրի բնության պահպանություն,
- Էկոհամակարգերի պահպանության եւ Էկոտուրիզմի զարգացում,
- որսագողության եւ ապօրինի ծառահատումների դեմ պայքար,
- բնափայտի մթերման եւ վաճառքի թափանցիկ, մրցակցային դաշտի ձեւավորում:

Կարելի է եզրակացնել, որ գյուղական համայնքներին անհրաժեշտ են որոշակի երաշխիքներ, որոնց առկայության պարագայում մերձակա բնակավայրերը կունենան բնօգտագործման որոշակի իրավունքներ ԲՀՊՏ տարածքում: Յարկ է նշել, որ մարզում գործող տարբեր կառույցներ¹² պատրաստակամ են աշակելու ծրագրի իրականացմանը՝ չնայած կարողությունների սղության պատճառով այդ կառույցներից ոմանք չեն կարող լիարժեք մասնակցություն ցուցաբերել:

¹² Տեղական բնապահպանական ՀԿ-ները կարող են կարեւոր դերակատարություն ունենալ բնապահպանական խնդիրների մասին բնակչության իրազեկությունը բարձրացնելու հարցում: Միաժամանակ, կարելի է եզրակացնել, որ բոլոր խմբերի եւ ոլորտների ներկայացուցիչները ակնկալում են համագործակցություն բնապահպանական մոնիթորինգի ոլորտում եւ մասնակցություն ծրագրում:

5.2 ԱՌԱՋՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կարելի է եզրակացնել, որ գործող ԲՀՊՏ-ները շոշափելի օգուտներ չեն առաջարկում հարակից գյուղերի բնակչությանը, փոխարենը նրանց վրա տարածվում են մի շարք սահմանափակումներ բնօգտագործման առումով: Եկամիւտների այլընտրանքային աղբյուրների խթանումը եւ համայնքային ծրագրերը կարող են այդ խնդրի լուծումը հանդիսանալ, եթե նախորդ ծրագրերից դասեր քաղվեն եւ եթե սեփականության/հողօգտագործման իրավունքները ի սկզբանե (այլանավորման փուլում) հստակ լինեն: Պետք է մշակվեն մեխանիզմներ, որոնց շնորհիվ ԲՀՊՏ կառավարման սկզբունքները հասկանալի կլինեն տեղաբնակների համար: Որոշումների կայացման գործընթացները պետք է լինեն թափանցիկ, իսկ շահառութերի տարբեր խմբեր պետք է ունենան մասնակցության եւ մոնիթորինգի որոշակի իրավունքներ: ԲՀՊՏ կառավարման համատեքստում առաջարկվում է հետեւողական լինել հասարակայնության հետ կապերի ապահովման եւ նրանց կարծիքները հաշվի առնելու հարցում:

Ծրագրի իրականացնող կողմերը պետք է նպաստեն մասնակցային գործընթացների ակտիվացմանը: Յամագործակցությունը պետք է ուժեղ հիմքերի վրա դրվի հատկապես տեղական եւ մարզային իշխանությունների մակարդակում:

Փորձը ցույց է տալիս, որ ԲՀՊՏ ստեղծման/ընդլայնման ծրագրերն ավելի արդյունավետ են, եթք համայնքային զարգացման բաղադրիչի իրականացման գործում բնապահպանական կառույցները համագործակցում են համապատասխան կարողություններ (գյուղի զարգացում, ագրորիզնես, բարձրարժեք գյուղատնտեսություն, ենթակառուցվածքի զարգացում եւ այլն) տնօրինող կառույցների հետ: Յարկավոր է անհրաժեշտ ջանքեր գործադրել շահառութերի միջև համագործակցությունը եւ հաղորդակցությունը ապահովելու ուղղությամբ, որպեսզի բնապահպանական եւ բնական ռեսուրսների կառավարման խնդիրները համապատասխան եւ ժամանակին լուծում ստանան:

Տեղական մակարդակում աշխատանքներն արդյունավետ համակարգելու եւ ԲՀՊՏ ծրագրի իրականացմանն աջակցելու ուղղությամբ պետք է իրականացվեն հետեւյալ ռազմավարական քայլերը:

- Ապահովել արգելավայրերի ստեղծման/ընդլայնման, քարտեզագրման, կառավարման պլանի կազմման աշխատանքներում համայնքի եւ այլ շահագրգիռ կողմերի ակտիվ մասնակցությունը:
- Մշակել քաղաքականություն, ըստ որի՝ արգելավայրերի հարակից համայնքների բնակիչները կունենան հողերի օգտագործման որոշակի իրավունքներ այն համայնքային տարածների նկատմամբ, որոնք կընդգրկվեն նախատեսվող արգելավայրի սահմաններում:
- Յամայնքային զարգացման ծրագրերի շրջանակներում հաշվի առնել ծրագրի մասին իրազեկության բարձրացման առաջնայնությունը:
- Աշխատել բնապահպանության ոլորտի հիմնական պատասխանատունների (օրինակ՝ որսիսկիչներ, տեսուչներ եւ այլք) հմտությունների զարգացման ուղղությամբ:
- Գնահատել արգելավայրերի ստեղծման, ընդլայնման եւ հետագա կառավարման սոցիալ-տնտեսական ծախսները, օգուտները եւ հնարավոր ազդեցությունները մասնավորապես համայնքների շահերի տեսանկյունից:
- Տարածել տեղեկատվությունը հանդիպում-քննարկումների, գրականության, հեռուստատեսության եւ սեմինարների միջոցով:
- Ներկայացնել գրականությունը բուկլետների եւ/կամ տեղեկատվական թերթիկների տեսքով:
- Յանդիպումների կազմակերպման աշխատանքներում ներգրավել մասնագետների:
- Տեղայնացնել արգելավայրերի կառավարման միջազգային փորձ՝ համապատասխան մարզի կարիքների:

- Յաշվի առնել տեղական առանձնահատկությունները/պայմանները, ինչպես նաև շահառուներից յուրաքանչյուրի կարիքները:
- Յամագործակցել տեղական համայնքների հետ:
- Արգելավայրի նշանակության վերաբերյալ բացատրական աշխատանքներ վարել համայնքային խմբերի հետ:
- Ինֆորմացիայի մատչելիության եւ թափանցիկության սկզբունքով կազմել վերահսկողության եւ մոնիթորինգի հաշվետվություններ եւ ներկայացնել գյուղական համայնքներին:
- Արգելավայրերի կառավարման գործընթացներում ներգրավել հարակից համայնքներին:
- Յամայանքաբնակների միջոցով պարզել տեղանքին հատուկ ուշագրավ շատ փաստեր կամ ավանդապատումներ (որոնք կարող են հետաքրքիր լինել այցելուների համար):

ԲՀՊՏ համակարգի զարգացման համատեքստում պետք է մեծ կարեւորություն տալ տեղեկատվական արշավներին, որպեսզի տեղական բնակչությունը իրազեկվի՝ ինչու են ԲՀՊՏ-ները ստեղծվում, ինչու են սահմանվում բնապահպանական սահմանափակումներ եւ ինչպես նրանք կարող են մասնակցել ծրագրի շրջանակներում հնարավոր եկոտուրիզմի զարգացման նախագծերին: Այսուհետեւ, պետք է զարգացնել սերտ համագործակցություն բնապահպանների եւ ԲՀՊՏ (արգելավայր կամ արգելոց) ադմինիստրացիայի, համայնքների, ՏԻՄ-երի եւ ՀԿ-ների միջեւ ապահովելու համար կենսաբազմազանության եւ կայուն համայնքային զարգացման արդյունավետությունը:

Շահառուների բոլոր խմբերի առաջարկն այն է, որ ԲՀՊՏ-ները հասանելի լինեն բնակչության համար. միայն արդյունքները տեսնելով՝ նրանք կարող են հասկանալ ԲՀՊՏ բուն նշանակությունը:

Կարելի է եզրակացնել նաև, որ Եկոկրթությունը եւ այլընտրանքային եկամուտի աղբյուրների ավելի ընդարձակ հնարավորությունները կարող են փոխել գյուղաբնակ հարցվողների վերաբերմունքը դեպի դրականը: Այս առումով, պետք է ներակայցվեն բնօգտագործման մասով որոշ առաջարկներ.

- 1) բնապահպանական սահմանափակումները եւ արգելավայրերի սահմաններում բնօգտագործման առանձնահատկությունները պետք է ընսարկվեն եւ համաձայնեցվեն համայնքների հետ,
- 2) սահմանափակումների դեպքում պետք է առաջարկվի որոշակի փոխհատուցում կամ երաշխավորվի բնական ռեսուրսների լիարժեք պահպանություն:

6 ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

6.1 ՀԱՎԵԼՎԱԾ 1. Հարցման մասնակից շահառուների ցանկ

N	Շահառուներ	Հասցե	Հեռախոս	Էլեկտրոնային փոստ	Հարցվող	Պաշտոն
1. ՏԵՂԱԿԱՆ ԵՎ ՄԱՐԶԱՅԻՆ ԻՇԽԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ						
1	Սյունիքի մարզպետարան / Գյուղատնտեսության Եւ բանափահպանության բաժին	Գարեգին Նժդեհի 1 377810 Կապան	23950, 94732083	karenap@rambler.ru	Հրայր Հակոբյան	Բաժնի ղեկավար
2	Կապանի քաղաքապետարան	Արամ Մանուկյան 5ա, Կապան	77552200		Ավետիք Համբարձումյան	Ծրագրերի Եւ արտաքին կապերի բաժնի պետ
3	Ջաջարանի քաղաքապետարան	Ջաջարան	28533022	vargev@mail.ru	Վարդան Գեւորգյան	Քաղաքապետ
4	Ճակատենի գյուղապետարան	Ճակատեն	94300310		Վրձրունի Հարությունյան	Գյուղապետ
5	Ծավի գյուղապետարան	Ծավ / Ծիշկերտ	77040470			Գյուղապետ
6	Ծիկահողի գյուղապետարան	Ծիկահող	93118361		Գեղամ Ղազարյան	Գյուղապետ
7	Լեռնաձորի գյուղապետարան	Լեռնաձոր	94820923 / 28561461		Ստեփան Պետրոսյան	Գյուղապետ
8	Վարդանիձորի գյուղապետարան	Վարդանիձոր	94062006		Ալբերտ Բեգլարյան	Գյուղապետ
9	Գեղանուշի գյուղապետարան	Գեղանուշ	28520029		Կամո Ավանեսյան	Գյուղապետ
10	Սրաշենի գյուղապետարան	Սրաշեն	93156990	srashen@mail.am	Գրինյա Աղաբեկյան	Գյուղապետ
11	Ներքին Հանդի գյուղապետարան	Ներքին Հանդ	77864280		Խաչիկ Բաղդասարյան	Գյուղապետ
2. ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐ						
12	ՀՀ մշակույթի նախարարություն (Պատմության Եւ մշակույթի հուշարձանների պահպանության գործակալության Սյունիքի Եւ Վայոց Ձորի բաժին)	Դավիթ Բեկի 7/24, Կապան	374285/ 24363, 93049923		Վիգեն Ծատուրյան	Բաժնի պետ

Նախատեսվող «Խուստուփ»Եւ գործող «Զանգեզուր» արգելավայրերի շահառուների վերլուծություն

Հավելվածներ

13	ՀՀ մշակույթի նախարարություն (Ժատմական միջավայրի պահպանության Սյունիքի մարզային ծառայություն)	Ա. Պապյան 10, բն. 12, Կապան	93062019		Աստղիկ Հակոբյան	Մարզային ծառայության պետ
14	ՀՀ բնապահպանության նախարարություն (Բնապահպանական պետական տեսչության Սյունիքի տարածքային բաժին)	Մելիք-Ստեփանյան 12, Կապան	93189612		Լեռն Պետրոսյան	Բաժնի պետ
15	«Շիկահող» պետական արգելավայր ԴՈԱԿ	Շիկահող	374 (285) 6-06-55, 094222051	office@shikahogh.am	Ռուբիկ Մկրտչյան	Տնօրեն
16	«Հայևատառ» ԴՈԱԿ Կապանի անտառատեսություն	Չարենցի 2, բն. 9, Կապան	37493217172		Վոլոյյա Միրզոյան	Անտառատեսության պետ

3. ՀԱՍՏՐԱԿԱԿԱՆ ԿԱՅՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ (ԽԱԵՒ՝ ԿՈՂՄԵՐԱՏԻՎՆԵՐ, ԱՍԴԻԱՏԻՎՆԵՐ, ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐ)

17	«Խուստուփ» բնապահպանական ՀԿ	Կապան	77131801, 077131801	khustup@yahoo.com	Վլադիկ Մարտիրոսյան	Նախագահ
18	«Մեղու» բնապահպանական ՀԿ	Մելիք-Ստեփանյան 20/10, Կապան	0285 5-29-20, 093622514		Վլադիկ Ղուկասյան	Նախագահ
19	Կապանի փոքր ֆերմերների ասոցիացիա ՀԿ	Թումանյան 3 բն. 18, 3301, Կապան	028527276, 37491203669	ksfa@ksfa-ngo.org	Արմինե Հակոբյան	Գործադիր տնօրեն
20	«Կենի» բնապահպանական ՀԿ	Խանջյան 8/5, Քաջարան	94629499	garegin-eko@rambler.ru	Գարեգին Գաբրիելյան	Նախագահ
21	ԵՎՀԿ Երեւանյան գրասենյակի Կապանի ներկայացուցչություն	Արամ Մանուկյան 1/60, Կապան	91290302	karen.arzumanyan@isce.org	Կարեն Արզումանյան	Գրասենյակի ղեկավարի պաշտոնակատար
22	«Էկոլոգիական անվտանգության ապահովման Եւ ժողովրդավարության զարգացման» ՀԿ	Կապան	37493887171	ecolodemo@gmail.com	Վրթուր Ղազարյան	Նախագահ
23	«Վորլդ Վիճն-Հայաստան» Կապանի S2Ծ գրասենյակ	Մելիք-Ստեփանյան 6, Կապան	093887171, 91423236	lusine_sarukhanyan@wvi.org sergey-arzumanyan@wvi.org	Լուսինե Սարուխանյան	Տրանսֆորմացիոն զարգացման համակարգող

4. ՄԱՍՆԱԿՈՐ ՀԱՏՎԱԾ

24	«Նոր հորիզոն» ուսիւնական վարկային կազմակերպություն	Մելիք-Ստեփանյան 42/28, Կապան	91404973		Ռոբերտ Թեւանյան	Տնօրեն
----	--	---------------------------------	----------	--	-----------------	--------

ՍՊԸ						
25	«Դինո գոլդ մայնինգ քամփին» ՓԲԸ	Գործարանային 4, Կապան	77900125	Norik.Agayan@dunderprecious.com Hasmik77@mail.ru	Նորայր Աղայան, Հասմիկ Սկրտումյան	Կառավարության Եւ հանրության հետ կապերի մենեջեր; Եկոլոգ
26	«Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ	Լեռնագործների 18, Քաջարան	93999727		Մարտուն Յարությունյան	Բնապահպանության բաժնի ղեկավար
27	«Լեռ-Էքս» ՍՊԸ	Մելիք Ստեփանյան 6, Կապան	94359342	ler-ex@yandex.ru	Արմեն Բակունց	Տնօրեն
28	«Աշարա» ՍՊԸ (անասնապահություն, շինարարություն Եւ այլն)	Լեռնագործների 5/30, Կապան / Ճակատեն	94300340		Արա Յարությունյան	Գործադիր տնօրեն
29	Մեղվապահ	Ծավ	77040470		Գուրգեն Յայրապետյան	Ինքնազբաղ
30	Մեղվապահ	Բաղաբերդի 2ա, բն. 17, Կապան	94222056		Կամո Գետրգյան	Ինքնազբաղ

6.2 ՀԱՎԵԼՎԱԾ 2. Շահառուների վերլուծության այլուսակ

Շահառու կամ ենթախումբ	Շահառուների կարիքներ	Ակնկալիքներ	ԲՀՊՏ բացասական ներգործության մոտավախություններ	Կարողություններ եւ մոտիվացիա	Դեր ու դիրքորոշում
Տեղական եւ մարզային իշխանություններ	Տեխնիկական եւ ֆինանսական ներդրումներ: Հողօգտագործման եւ քարտեզագրման մասին ինֆորմացիա: Հստակ սահմանված հողօգտագործման իրավունքներ:	Էկոտուրիզմի զարգացում եւ աշխատանքի ապահովում: Բնապահպանություն, անտարի պահպանություն եւ անտառների վերականգնում: Կանոնակարգված որս եւ ծառահատումներ: Աղբահանման համակարգի ներդրում:	Գյուղատնտեսության եւ բանապահպանության հակասություններ: Համայնքների կարիքների եւ շահերի անտեսում: Բնապահպանական սահմանափակումներից բխող նվազ հնարավորություններ համագործակցության ոլորտում:	Մարդկային ռեսուրսներ եւ ենթակառուցվածք:	Հիմնական շահառուներ (նրանք առանցքային դեր ունեն բնապահպանական այս նախագծում՝ ըստ բնօգտագործման լիազորությունների, իրավասությունների եւ պատասխանատվության կամ պահանջների): Մասամբ նրանք ընդդիմադիր շահառուներ են:
Պետական կառույցներ					
i. «Հայանտառ» ՊՈՎԿ Կապանի անտառունտեսություն	Տեխնիկական գինվածություն (գենքեր, տրանսպորտային միջոցներ, ձիեր եւ այլն): Համատեղ աշխատանք/համագործակցություն:	Համագործակցություն «Հայանտառ»-ի եւ արգելավայրի աղմխիստրացիայի միջեւ: Որսագորության եւ ապօրինի ծառահատումների բարելավված/վերանայված մեխանիզմներ:	Բնապահպանական սահմանափակումներից բխող նվազ հնարավորություններ համագործակցության ոլորտում:	Մասնագիտական եւ խորհրդատվական ծառայություններ:	Հիմնական շահառու (աջակից):
ii. Բնապահպան ական պետական տեսչության Սյունիքի տարածքային բաժին	Տեխնիկական գինվածություն (գենքեր, տրանսպորտային միջոցներ, ձիեր եւ այլն): Աշխատակազմի վերապատրաստում:	Կայրի կենդանատեսակների պոպուլյացիայի աճ: Տեղական բնակչության իրազեկության բարձրացում: Հզորությունների ստեղծում:	Բնապահպանության եւ հանքարդյունաբերության հակասություններ:	Մասնագիտական եւ խորհրդատվական ծառայություններ:	Հիմնական շահառու (աջակից):

		քնապահպանական իրավախախումների դեմ արդյունավետորեն պայքարելու համար:			
iii.	ՀՀ մշակույթի նախարարություն	Գրասենյակային պայմաններ:	Գերշահագործված քնական ռեսուլսների վերականգնում: Շրջակա միջավայրի աղտոտման նվազեցում ու կախում: Թափոնների եւ արտանետումների ծավալների կրծատում:	Հանքարդյունաբերող ընկերությունները եւ քնափայտի մեթոդով եւ վաճառքով գրաղվող կազմակերպությունները / անհատները: Գյուղատնտեսական նշանակության հողերի եւ այլ քնական ռեսուլսների սահմանափակում:	Մասնագիտական եւ խորհրդատվական ծառայություններ:
iv.	«Շիկահող» ԴՈԱԿ	Համատեղ աշխատանք/ համագործակցություն:	Կենդանիների միգրացիայի ուղիների ապահովում ¹³ :	Արգելավայրերի ստեղծման եւ ընդլայնման գործընթացների հեռավար կառավարում:	Մասնագիտական եւ խորհրդատվական ծառայություններ:
Քաղաքացիական հասարակության ինստիտուտներ		Համաֆինանսավորում եւ համագործակցություն: Ուսումնական դասընթացների եւ էկոնմարքարների կազմակերպում / իրականացում: Տեխնիկական աշակեցություն եւ հզորությունների ստեղծում:	Կենսաբազմազանության պահպանների պաշտպանություն: Հասարակության լայն զանգվածների ներգրավում որոշումների կայացման գործընթացներում: Կենսապայմանների բարելավում: Արգելավայրի պատշաճ վերահսկողություն եւ մոնիթորինգ:	Արգելավայրերի պրոֆեսիոնալ եւ բարձր որակավորում ուսեցող աշխատակազմի բացակայություն: Համայնքների եւ արգելավայրի ադմինիստրացիայի, ծրագրի իրականացող / ֆինանսավորող կողմերի միջեւ հնարավոր վեճեր: Ծախսերի եւ օգուտների սխալ հաշվարկ: Ծահառուների հետաքրքրությունների բախում:	Մասնագիտական եւ խորհրդատվական ծառայություններ: Երկրորդական շահառուներ (անհրաժեշտ է ծրագրի տարբեր փուլերում ներգրավել նրանց համագործացության պրոցեսներում: Նրանք պատրաստակամ են համագործակցել եւ աշակել ծրագրի իրականացմանը):

¹³ Կենդանիների միգրացիայի ուղի՝ ցամաքային, օդային, ջրային ուղիներ, որոնցով իրականացվում են կենդանիների կանոնավոր, պարբերական եւ ոչ պարբերական զանգվածային տեղաշարժերը՝ պայմանավորված գոյության պայմանների փոփոխությամբ կամ կապված դրանց զարգացման ցիկլերի հետ (ՀՀ «Կենդանական աշխարհի մասին» օրենք):

		<p>Տեղական բնակչության շրջանում մոտեցումների / վերաբերմունքի փոփոխում:</p> <p>Շրջակա միջավայրի հիմնահարցերի լավ իմացություն:</p>	Իրավական բացեր:		
Մասնավոր հատված	<p>Նիևանսական, տեխնիկական եւ իրավական աշակցություն:</p> <p>Փոխգործակցություն բնապահպանության ոլորտում:</p>	<p>Էկոտուրիզմի աճ եւ աշխատատեղեր:</p> <p>Բնապահպանական վերահսկողության ուժեղացում:</p> <p>Բնօգտագործման կանոնակարգում:</p> <p>Բնական ռեսուրսների երկարաժամկետ ու ռացիոնալ օգտագործում:</p> <p>Մեղվապահության զարգացում:</p> <p>Զրի որակի եւ մատակարարման բարելավում:</p>	<p>Յանքարյունաբերության ու բնապահպանության բախում:</p> <p>Որոշումների կայացման գործում անժամանակ/ուշ ներգրավումը:</p> <p>Յամայնքների սահմանամերձ տեղակայությունը:</p>	<p>Բիզնեսի աշակցության ծառայություններ:</p> <p>Իրազեկության բարձրացում՝ որպես կորպորատիվ տղիալական պատասխանատվության մի մաս:</p> <p>Բնապահպանության ոլորտի մասնագիտական փորձի ներդնում:</p>	<p>Յիմնական շահառուներ (նրանք առանցքային դեր ունեն բնապահպանական այս նախագծում՝ ըստ բնօգտագործման պահանջների եւ շահերի):</p>

6.3 ՀԱՎԵԼՎԱԾ 3. Շահառուների կարիքների գնահատման հարցաթերթ

	WWF Armenia 96 Sarmen Str. Yerevan 0019 Armenia	AM Partners Consulting Company ap.1, 62/1 K.Ulnetsi Str. Yerevan, Armenia	
---	--	--	---

Հարգելի հարցվող,

Ձեզ ներկայացված հարցաթերթի լրացմամբ Դուք կօժանդակեք Բնության համաշխարհային հիմնադրամի կողմից իրականացվող «Հայաստանի պահպանվող տարածքների համակարգի զարգացում» ծրագրի իրականացմանը: Ծրագրի նպատակն է աջակցել Հայաստանի կենսաբազմազանության պահպանությանը Եւ նպաստել արգելավայրերի ընդլայնմանը՝ ապահովելով Եկոհամակարգերի առավել ընդգրկուն ներկայացվածություն:

Հարցաթերթիկը կազմվել է նախատեսվող «Գնիշիկ», «Խուստուփ» Եւ գործող «Զանգեզուր» արգելավայրերի վերաբերյալ Ձեր մոտեցումները պարզաբանելու նպատակով: Ծրագրի իրականացման թիմը կարեւորում է Ձեր կարծիքը՝ ակնկալելով հստակ պատասխաններ:

Ակնկալում ենք Ձեր աջակցությունը, կանխավ շնորհակալություն:

I. Անձնական տվյալներ

Անուն-ազգանուն	
Կազմակերպություն	
Պաշտոն	
Կրթություն	
Տարիքը	
Հասցեն	

1. Տեղյակ եք, արդյո՞ք, «Գնիշիկ», «Խուստուփ» արգելավայրերի ստեղծման Եւ «Զանգեզուր» արգելավայրի ընդլայնման ծրագրերի մասին: Եթե այո, ապա նշեք, թե ինչ գիտեք (ո՞վ է ստեղծում, ո՞ր ծրագրով, ինչ նպատակո՞վ կ Եւ այլն) աղբյուրներից:

այո	ոչ

2. Տեղյակ եք, արդյո՞ք, «Գնիշիկ», «Խուստուփ» արգելավայրերի նախատեսվող, ինչպես նաև գործող «Զանգեզուր» արգելավայրի առկա տարածքների մասին: Եթե **այո**, ապա նշեք սահմանները:

այո	ոչ	մասամբ

3. Ինչպե՞ս եք վերաբերվում նշված արգելավայրերի ստեղծմանը եւ ընդլայնմանը: Ինչո՞ւ:

դրական	չեղոք	բացասական	

4. Ինչպիսի՞ տեղեկատվության պակաս է զգացվում արգելավայրերի վերաբերյալ:

Տեղեկատվություն	Կարեւորությունը		
	քիչ կարեւոր	կարեւոր	շատ կարեւոր
Քարտեզներ, հողօգտագործման պլաններ			
Իրավական դաշտ, օրենսդրություն			
Բնապահպանական սահմանափակումներ			
Արգելավայրերի կառավարում եւ օգտագործում			
Արգելավայրերի կառավարման միջազգային փորձ			
Տարածքի ուսումնասիրությունների արդյունքներ			
Այլ (նշեք)			

Այլ (Աշեք)			
Այլ (Աշեք)			

5. Նշեք տեղեկատվության ձեռքբերման եւ հաղորդակցության ցանկալի ձեւերը:

Տեղեկատվության աղբյուր	Կարեւորությունը		
	քիչ կարեւոր	կարեւոր	շատ կարեւոր
Հանդիպումներ			
Գրականություն			
Ինտերնետ, Ելեկտրոնային փոստ			
Այլ (Աշեք)			
Այլ (Աշեք)			
Այլ (Աշեք)			

6. Ինչպես եք ընդունում համայնքի վարչական սահմաններում գտնվող տարածքներում արգելավայր ստեղծելու գաղափարը:

Համաձայն եմ, որովհետեւ

Համաձայն չեմ, որովհետեւ

7. Ո՞րն է արգելավայրերի հիմնական նշանակությունը համայնքի համար, պարզաբանել: Դարցը տալ միայն մարզպետարանների եւ համայնքների ներկայացուցիչներին:

ա. սոցիալական, քանի որ _____

բ. տնտեսական, քանի որ _____

գ. բնապահպանական, քանի որ _____

8. Ներկա պահին համայնքները մասնակցում են արգելավայրերի ստեղծման եւ ընդլայնման գործընթացներին: Դարցը տալ միայն մարզպետարանների եւ համայնքների ներկայացուցիչներին:

այո	ոչ

9. Ներկա պահին արգելավայրերի ստեղծումը եւ ընդլայնումը կարող է, արդյո՞ք, խնդիրներ առաջացնել համայնքների շահերի տեսանկյունից: Ինչու՞: Դարցը տալ միայն մարզպետարանների եւ համայնքների ներկայացուցիչներին:

այո	ոչ	չգիտեմ

10. Նշեք արգելավայրերի կառավարման խնդիրներում Ձեր կողմից հնարավոր մասնակցության/աջակցության ձեւերը, որոնք կնպաստեն դրանց արդյունավետ կառավարմանը:

11. Ի՞նչ աջակցության կարիք ունի համայնքը արգելավայրերի կառավարմանը Եւ շրջակա միջավայրի պաշտպանությանը արդյունավետորեն ներգրավվելու համար: Խնդրում ենք մանրամասնել պատասխանները: Յարցը տալ միայն մարզպետարանների Եւ համայնքների ներկայացուցիչներին:

ա. Տեխնիկական _____

բ. Իրավական _____

գ. Ուսուցողական / իրազեկման _____

դ. Ֆինանսական-----

ե. Այլ _____

զ. Կարիք չունեն աջակցության _____

12. Դուք, որպես շահառու, ի՞նչ աջակցության կարիք ունեք արգելավայրերի կառավարմանը Եւ շրջակա միջավայրի պաշտպանությանը արդյունավետորեն ներգրավվելու համար: Խնդրում ենք մանրամասնել պատասխանները: Յարցը չտալ համայնքների ներկայացուցիչներին:

ա. Տեխնիկական _____

բ. Իրավական _____

գ. Ուսուցողական / իրազեկման _____

դ. Ֆինանսական _____

ե. Այլ _____

զ. Կարիք չունեն աջակցության _____

13. Որո՞նք են արգելավայրի ստեղծման, ընդլայնման Եւ հետագա կառավարման հիմնական խնդիրները, որոնք կարող են վտանգել այս ծրագրերը:

14. Ի՞նչ կարողություններ ունի Ձեր կազմակերպությունը արգելավայրերի կառավարմանը մասնակցելու/աջակցելու առումով: Մանրամասնել պատասխանը: Հարցը չտալ մարզպետարանների Եւ համայնքների ներկայացուցիչներին:

15. Ինչպիսի՞ կոնկրետ ակնկալիքներ ունեք արգելավայրերի ստեղծումից Եւ ընդլայնումից: Մանրամասնել պատասխանը:

16. (Ձեր) ո՞ր կոնկրետ խնդիրների լուծմանը պետք է օժանդակի արգելավայրերի ստեղծումը: Մանրամասնել պատասխանը:

17. Արդյոք արգելավայրերի ստեղծումն ու ընդլայնումը կարող է լուծում տալ մասնավորապես անտարիատումներին Եւ/կամ որսագողությանը: Ինչպե՞ս եք վերաբերվում այս խնդիրներին: Մանրամասնել պատասխանը:

18. Ովքե՞ր պետք է ներգրավված լինեն արգելավայրերի գործունեության վերահսկողությանը:
Ինչու՞ : *Մանրամասնել պատասխանը:*

19. Կոնկրետ ինչպե՞ս կարող է արգելավայրերի ստեղծումը Եւ ընդլայնումը նպաստել հետեւյալ շահառուներից յուրաքանչյուրի գործունեության զարգացմանը:

ա. Համայնք _____

բ. Մարզային իշխանություն _____

գ. Մասնավոր բիզնես _____

դ. ՀԿ-ներ _____

ե. Պետական կառույցներ («Հայանտառ ՊՈԱԿ», բնապահանական տեսչություն, այլ)

զ. Միջազգային դուռը կազմակերպություններ _____

ը. Տուրիստական կառույցներ _____

ը. Այլ _____

20. Կոնկրետ ինչպես կարող է արգելավայրերի ստեղծումը խանգարել հետեւյալ շահառուներից յուրաքանչյուրի գործունեության զարգացմանը:

ա. Համայնք _____

բ. Մարզային իշխանություն _____

գ. Մասնավոր բիզնես _____

դ. ՀԿ-ներ _____

ե. Պետական կառույցներ («Հայանտառ ՊՈՎԿ», բնապահանական տեսչություն, այլ)

զ. Միջազգային դուռը կազմակերպություններ

է. Տուրիստական կառույցներ _____

ը. Այլ _____


21. Ինչպիսի՞ թեմաներով կցանկանայիք ուսուցումներ ստանալ: Գնահատեք ըստ կարեւորության: 1-ից 5-ը, որտեղ 1-ը «անհրաժեշտ չէ», իսկ 5-ը «խիստ անհրաժեշտ»:

Թեմա	Միավոր
Բույսերի պահպանություն	
Կենդանիների պահպանություն	
Հավատարմագրային կառավարում	
Բնապահանական օրենսդրություն եւ կանոնակարգեր	
Արգելավայրերի կառավարման պլանավորում	
Համայնքային արոտավայրերի եւ խոտհարքերի կայուն կառավարում	
Ռեկրեացիայի, Էկոտուրիզմի	
Որսատևական կազմակերպում	


Օտար լեզուների ուսուցում	
Համակարգչի ուսուցում	
ՎյԼ՝	
ՎյԼ՝	
ՎյԼ՝	

22. Բաց առաջարկություններ եւ կարծիք

6.4 ՀԱՎԵԼՎԱԾ 4. Նախատեսվող «Խուստուփ» արգելավայր



6.5 ՀԱՎԵԼՎԱԾ 5. «Զանգեզուր» արգելավայր



6.6 ՀԱՎԵԼՎԱԾ 6. Հղումներ

- Բնության համաշխարհային հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղ (2008) «Ճիկահող» պետարգելոցի կառավարման պլանի նախագիծ:
- Catacutan D. and Taniu J. (2007) *Engaging SHs in Integrated Natural Resource Management: approaches and guidelines from Land care*. World Agro forestry Centre.
- Schmidt-Soltau K. (2004) *SH analysis for the Intervention of the German Financial Cooperation in the Context if the Forest and Environment Sector Programme in the South West Province of Cameroon*. Mary Boya Meboka, CODEV Service. Sponsored by KfW
- Frame B., Gordon R., and Mortimer, C. (2010) *Hatched: The capacity for sustainable development*. Publication (SD) Paper1

- 5) Zeppel H. (2006) *Indigenous ecotourism: sustainable development and management*. CABI International.
- 6) WWF-Armenia (2010) *Wood-processing sector survey*. Authored by AM Partners Consulting Company within ENPI-FLEG project.
- 7) Herath G. and Prato T. (2006) Using multi-criteria decision analysis in natural resource management. Ashgate Publishing Limited.
- 8) EEPSEA (2008) *Management options for protected areas*. Insights and recommendations from studies on environmental and resources economics in Southeast Asia.
- 9) Larsen P. and Oviedo G. (2006) *Reconciling indigenous peoples and protected areas: rights, governance and equitable cost and benefit sharing*. IUCN

www.panda.org/standards/1_1_SH_analysis/

<http://www.worldagroforestrycentre.org/sea/Publications/files/paper/PP0236-07.PDF>

<http://www.social-impact-of-conservation.net/>

<http://www.fao.org/nr/giahs/other-systems/other/asia-pacific/kamchatka-russia/detailed-information10/en/>

<http://www.infolizer.com/1ai1a3c3cproj5e3cta1or7g/Stakeholder-analysis-in-a-community-based-forest-and-wildlife-.html>

[http://www.mekonginfo.org/mrc_en/doclib.nsf/0/2BDE2B639D4DA54C47257181003D8AE3/\\$FILE/FULLTEXT121.pdf](http://www.mekonginfo.org/mrc_en/doclib.nsf/0/2BDE2B639D4DA54C47257181003D8AE3/$FILE/FULLTEXT121.pdf)

<http://www.idosi.org/larcji/1%286%2910/2.pdf>

<http://www.ipas.com/article/view/2404>

<http://www.fs.fed.us/global>

<http://www.parliament.am/legislation.php?sel=show&ID=1452&lang=arm>